Զվարճալի հեքիաթներ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
EDIT PRINT
Publishing House

ՀՏԴ 398.21
ԳՄԴ 82.3(0)
Զ 857

Զվարճալի հեքիաթներ.- Եր.: Էդիթ Պրինտ, 2020.- 88 էջ:
Զ 857

Հեքիաթների այս ընտրանիում ներկայացված են զվարճալի պատմություններ տարբեր ժողովուրդների ու հայկական հեքիաթների շտեմարանից: Դրանք ցույց են տալիս, որ ցանկացած բարդ իրավիճակ հնարավոր է հաղթահարել լավատեսության շնորհիվ: Իսկ հերոսների հնարամիտ արարքներն ու սրամտությունները ժպտալու առիթներ են պարգևում ընթերցողին:

ՀՏԴ 398.21
ԳՄԴ 82.3(0)

ISBN 978-9939-75-509-0
© Էդիթ Պրինտ, 2020

Էշի երգն ու ուղտի պարը

Մի մարդ մի ուղտ ու մի էշ է ունենում: Էնքան է բանեցնում սրանց, որ հալից գցում է: Մի օր էշն ասում է.

– Ո՛ւղտ ախպեր, պետք է էստեղից փախչենք, թե չէ մեր տերը մեզ բանեցնելով կսպանի:

– Շատ ճիշտ ես ասում, է՛շ ախպեր, գնանք, մեր գլուխներն ազատենք. թքա՛ծ էսպես անխիղճ տիրոջ վրա:

Ուղտը թքում է տիրոջ դռան վրա, էշն էլ պոչը բարձրացնում է և... նախշում տիրոջ շեմը: Վեր են կենում լույսը չբացված, քանի դեռ տերը քնած է լինում, փախչում են:

Երկու եղբայրացուն իրենց քեֆին՝ առանց կապի, ազատ, ուր ուզում, գնում են: Ուզում են՝ նստում են, ուզում են՝ պառկում են, ուզում են՝ թավալվում են, ուզում են՝ քնում են: Տեր չունեն, անելիք չունեն, ուտելիքը՝ առատ... արածի՛ր, որքան փորդ կտեղավորի: Երկուսն էլ գիրանում են, կազդուրվում, քեֆներին քեֆ չի հասնում:

Մի օր էլ էշի տրամադրությունը բարձր է լինում, ասում է.

– Ո՛ւղտ ախպեր, երգելս եկել է:

– Է՛շ ախպեր,– ասում է ուղտը,– առանց գինու հարբե՞լ ես. ի՞նչ երգելու ժամանակ է: Տղի՞դ ես պսակում, թե՞ աղջկադ ես մարդու տալիս: Հարսանիքի հո չե՞նք եկել: Դու լավ գիտես, որ քո ձենը ես շատ եմ սիրում, բայց ամեն բան իր ժամանակն ունի: Հիմա քո անուշ ձենը որ լսեն, գալու են մեզ բռնեն, տանեն էնքա՛ն բանեցնեն, որ հալից ընկնենք:

– Ո՛ւղտ ախպեր,– ասում է էշը,– երգելս որ եկել է, անկարելի է. պետք է երգեմ:

Ասում է ու սկսում զռալ: Սրանց տերը էշի ձայնը լսում է, տեղնուտեղը գալիս է, երկուսին էլ տանում, էնքա՛ն է աշխատեցնում, որ հալից ընկնում են:

Էշն ու ուղտը մեկ անգամ էլ են փախչում տիրոջից: Ճանապարհին մի գետ է հանդիպում, բայց էշն էնքան հոգնած է լինում, որ չի կարողանում գետն անցնել:

– Է՛շ ախպեր,– ասում է ուղտը,– արի քեզ շալակեմ, գետն անցկացնեմ:

– Չես կարող, ո՛ւղտ ախպեր,– ասում է էշը,– ծանր եմ. տերս միշտ ասում էր՝ էս էշը որ սատկի, սրա կաշին մի ուղտաբեռ կլինի:

– Է՛շ ախպեր,– ասում է ուղտը,– դու՝ խելոք, ո՞նց ես հավատում տիրոջդ խոսքին: Արի շալակեմ, քեզ տանեմ:

Էշը բարձրանում է ուղտի շալակը, ուղտը նրան անցկացնում է գետի մյուս ափը: Ճանապարհը մի բարձր քարաժայռի վրայով էր անցնում: Ուղտը ավանակին շալակած հասնում է ժայռի կատարը ու հենց էդտեղ ասում.

– Է՛շ ախպեր, պար գալս եկել է:

– Էդ ի՞նչ ես ասում, ո՛ւղտ ախպեր,– ասում է էշը,– իմ քուռակը, որ քուռակ է, նա էլ առանց զուռնա-դհոլի պար չի գալիս: Ամեն ինչ իր ժամանակն ունի. թող էստեղից անցնենք, նոր ինչքա՛ն կուզես՝ պար արի:

– Է՛շ ախպեր,– ասում է ուղտը,– անկարելի է. պար գալս որ եկել է, պիտի պարեմ:



Ասում է ու սկսում պարել: Երկուսն էլ միանգամից ընկնում են գետը, քիչ է մնում՝ խեղդվեն: Էշը վախից էնպիսի զռոց է գցում, որ տերը գալիս է, հասնում սրանց, մի կերպ գետից հանում, հետո ձեռքն է առնում դագանակն ու… տո՛ւր թե կտաս. երկուսին էլ մի լավ դնգստում է, որ էլ չփախչեն: Ուղտը և՛ ծեծվում է, և՛ մտածում.

– Ինձ տեղն էր. ես ինչո՞ւ լսեցի էշին, ինչո՞ւ իմ ծանր տեղը թեթևացրի, ինչո՞ւ փախա տիրոջիցս. ո՞վ է տեսել, որ խելոքը էշի խելքով առաջնորդվի:

Պարծենկոտ Գեմբեյը

Մի գյուղում ապրում էր մի մարդ, անունը՝ Գեմբեյ: Հարևաններն ամենևին չէին սիրում նրան. ախր շատ պարծենկոտ մարդ էր: Եթե որևէ մեկին մի անհաջողություն էր պատահում, Գեմբեյը ծիծաղում էր ու ասում.

– Ինձ էդպիսի բան չի պատահի: Ինձ խաբելը հեշտ բան չէ:

Մի անգամ Գեմբեյը պատրաստվում էր քաղաք գնալու: Նա որոշել էր մի հորթ գնել: Կինը մի լավ, պինդ պարան է ջոկում, տալիս մարդուն և ասում.

– Հորթը տուն կբերես էս պարանով կապված: Տես՝ ճանապարհին չգողանան:

– Ինչ հիմարություններ ես ասում,– բարկանում է Գեմբեյը:– Ինձնից հորթ գողանան: Չէ: Ինձ խաբելը հեշտ բան չէ:

Նույն օրը Գեմբեյը գնում է քաղաք: Երկար ժամանակ շրջում է շուկայում, վերջապես մի պարարտ, ճերմակ հորթ է տեսնում:

«Ա՛յ, սա հենց էն է, ինչ ես որոնում էի, ուրախանում է Գեմբեյը:– Մեր գյուղում ոչ ոք էսպիսի հորթ չունի»: Եվ բավականությունից նույնիսկ լեզուն ճլթացնում է:

Հետո ծախողի հետ մի քիչ սակարկում, հորթը գնում ու ճամփա է ընկնում դեպի տուն: Երբ հասնում է քաղաքի ծայրը, հիշում է, որ այդտեղ իր հին ծանոթ կոշկակարն է ապրում: Հորթը քաշում, մտնում է իր այդ բարեկամի մոտ և իսկույն էլ սկսում պարծենալ.

– Մի տես՝ ինչ հորթ եմ առել: Դու քո օրում էսպիսի հորթ ունեցած չես լինի...

Եվ բավականությունից Գեմբեյը նորից լեզուն ճլթացնում է: Իսկ այդ վարպետը մի աշակերտ ուներ, Իտիրո անունով մի տղա: Այս Իտիրոն նայում է հորթին, ինքն էլ է լեզուն ճլթացնում ու ասում.

– Ճիշտ որ լավ հորթ է, Գեմբեյ-սան, բայց զգույշ եղեք, որ ճանապարհին չգողանան:

– Քեզնից, իհարկե, կգողանան, բայց ինձանից հորթ գողանա՞ն: Էդպիսի բան լինել չի կարող, ես էդպիսի մարդ չեմ:

Այս ասելով՝ նա մնաս բարով է անում ու ճանապարհ ընկնում դեպի գյուղ:

Հենց որ Գեմբեյը հեռանում է, Իտիրոն ասում է.

– Վարպե՛տ, թույլ տուր գնամ, էս մարդուն էնպիսի մի դաս տամ, որ էդ պարծենկոտությունից ձեռ քաշի:

– Էդ հիվանդությունը նրա մեջ պինդ է նստած, ոչ ոք դուրս քշել չի կարող,– պատասխանում է վարպետը:

– Ոչինչ, ես միայն խնդրում եմ, որ ինձ թույլ տաս՝ փորձեմ:

– Իսկ ի՞նչ պիտի անես:

– Ես նրա հորթը կգողանամ:

– Գնա փորձիր, եթե ուզում ես: Միայն թե դրանից բան չի դուրս գա, ախր նա հորթը պարանով կապած է տանում:

– Դե կտեսնենք,– ասում է աշակերտը և, մի զույգ փայտե սանդալ վերցնելով, դուրս վազում:

Իտիրոն գիտեր, թե որ ճանապարհով պետք է գնա Գեմբեյը: Նա կողմնակի կարճ շավիղով վազում, Գեմբեյի առաջն է ընկ-



նում, փայտե սանդալներից մեկը գցում է ճանապարհին և ինքը թաքնվում խոտերի մեջ:

Մեկ էլ տեսնում է՝ ահա գալիս է Գեմբեյը՝ հորթը հետևից քաշելով և ուրախ-ուրախ ինչ-որ բան մռմռալով քթի տակ: Գալիս, հասնում է սանդալին.

– Ա՜յ, ա՜յ,– գլուխն օրորում է պարծենկոտը:– Ափսոս, որ երկրորդը չկա: Իսկ մեկի համար կռանալ էլ չարժե:

Ասում և հորթը քաշելով առաջ է գնում: Այսպես նա մի երկուերեք հարյուր քայլ էլ է գնում, հասնում է մի անտառ ու մեկ էլ տեսնում՝ ըհը, սանդալի մի հատն էլ այդտեղ է ընկած:

– Ափսո՜ս, ափսո՜ս, որ այն մեկը չվերցրի,– վշտանում է Գեմբեյը:– Ասենք՝ երևի հենց էնտեղ էլ ընկած կլինի, գնամ բերեմ:

Այսպես ասելով՝ Գեմբեյը հորթը կապում է մի ծառի և վազում հետ, որտեղ տեսել էր առաջին սանդալը: Սանդալն իսկապես էլի ընկած էր իր տեղը: Գեմբեյն ուրախ-ուրախ վերցնում է սանդալը և հետ վազում: Բայց երբ հասնում է անտառ, տեսնում է հորթը չկա:

Շատ է վազվզում Գեմբեյը, անտառը ոտի տակ տալիս, բայց հորթը չկար ու չկար. ասես գետնի տակն էր անցել:

«Էդ ինչպե՞ս է կապից արձակվել»,– մտածում էր Գեմբեյը:

Վերջը հորթը չգտնելով՝ նա նորից քաղաք է վերադառնում, դե հո չէր կարող առանց հորթի տուն գնալ: Այլապես ստիպված պիտի լիներ խոստովանել, որ հորթն առել է և կորցրել:

Իսկ այդ ժամանակ Իտիրոն արդեն հորթը տարել էր տուն, բակում թաքցրել: Նա վարպետին պատմում է, թե ինքն ինչպես է խաբել Գեմբեյին, և երկուսն էլ կուշտ-կուշտ ծիծաղում են:

– Հիմա ի՞նչ անենք էդ հորթը,– հարցնում է աշակերտը:

Բայց վարպետը չի հասցնում պատասխան տալ. հենց այդ պահին դուռը բացվում է, և ներս է մտնում Գեմբեյը:

– Իսկ որտեղ է քո հորթը, հարգելի Գեմբեյ-սան,– հարցնում է վարպետը՝ իբր ոչինչ չիմանալով:

– Հո՛րթը: Հա՛, գիտես ինչ: Էն հորթին մեկ էլ որ լավ նայեցի, դուրս չեկավ, չհավանեցի ու ճանապարհին ծախեցի մի ինչ-որ մարդու: Հիմա ուզում եմ մի ուրիշը գնել, դրա համար էլ վերադարձել եմ:

Վարպետը Գեմբեյին ծխախոտ է հյուրասիրում և ասում.

– Քո բախտը բերել է, ես էլ հենց ուզում էի իմ հորթը ծախել: Եթե ժլատություն չանես, կարող եմ քեզ տալ:

Եվ նա Իտիրոյին պատվիրում է գնալ, հորթը բերել:

– Ինչքա՞ն ես ուզում էս հորթի համար,– հարցնում է Գեմբեյը, երբ Իտիրոն արդեն հորթը բերել էր:

– Նույնքան, ինչքան որ վճարել էիր քո հորթի համար:

– Բա՛ն ասացիր,– թևերը տարածում է Գեմբեյը:– Սա ի՞նչ հորթ է: Իմն ավելի մեծ էր, չաղ: Եվ, հետո, քո հորթի մազերն էլ շատ կարճ են:

– Ինչպես կուզես: Դրանից էժան չեմ տա:

Գեմբեյն ստիպված է լինում հենց իր հորթի համար նորից նույնքան փող վճարել:

Երբ նա բակից դուրս էր գալիս, վարպետն ասում է.

– Գեմբեյ-սան, հուսով եմ, որ ճանապարհին հորթդ գողանալ չես տա:

Եվ Գեմբեյը նորից պարծենում է.

– Բա՛ն ասացիր: Ո՞վ կարող է ինձնից հորթ գողանալ: Ես ուրիշների պես դմբո մարդ չեմ:

Հենց որ Գեմբեյը գնում է, Իտիրոն նորից է խնդրում.

– Վարպե՛տ, թույլ տուր՝ գնամ, էդ հորթը երկրորդ անգամ գողանամ:

– Դե լա՛վ, երկրորդ անգամ քեզ չի հաջողվի, հիմա նա ուշքը գլխին կպահի:

– Ոչինչ, թույլ տուր՝ փորձեմ: Շատ եմ ուզում դրա գլխին օյին խաղալ, որ խելքը գլուխը գա:

– Դե լավ, փորձիր,– ասում է վարպետը:

Իտիրոն կարճ ճանապահով վազում է անտառ, որպեսզի Գեմբեյից շուտ հասնի այնտեղ: Նա ճանապարհից ոչ հեռու թաքնվում է թփերի մեջ և սկսում սպասել: Հենց որ Գեմբեյը հեռվում երևում է, Իտիրոն բարձր-բարձր բառաչում է.

– Ըմ-մու-ու-ու...

– Օհո՛, սա հո իմ կորած հորթն է բառաչում,– ուրախանում է Գեմբեյը:– Հիմա ես նրան կբռնեմ և երկու հորթ կունենամ:

Այս ասելով՝ հորթն ամուր կապում է ծառից և ինքը նետվում թփերի մեջ, որտեղից բառաչն էր լսել:

Իսկ Իտիրոն արդեն մի ուրիշ տեղ էր փախել և տեղից տեղ վազելով, այստեղ այնտեղ բառաչելով՝ Գեմբեյին քաշում է անտառի խորքը, իսկ ինքն շտապում դեպի ճանապարհը, հորթն արձակում ու արագ-արագ քշում տուն:

Միայն իրիկնապահին Գեմբեյն անտառից դուրս է գալիս ճանապարհ և ի՞նչ տեսնում, երկրորդ հորթն էլ չկա. կորել է:

Նորից Գեմբեյը գլուխը կախ քայլում է դեպի քաղաք: Երբ հասնում է կոշկակարի տուն, լուռ կանգնում է շեմքին:

– Ի՞նչ է պատահել,– հարցնում է խորամանկ Իտիրոն,– այդ ինչո՞ւ ես նորից քաղաք եկել, և որտե՞ղ է քո հիանալի հորթը:

– Գիտե՞ս ինչ,– նորից սկսում է խաբել պարծենկոտը,– ճանապարհին ես մտա վանքը և հորթը վանահորը նվիրեցի, որպեսզի Աստված ավելի բարի աչքով նայի ինձ: Առավոտյան կգնամ շուկա, նոր հորթ կգնեմ:

Վարպետը ծիծաղում ու ասում է.

– Մինչև առավոտ սպասելու կարիք չկա: Ես էլի մի հորթ ունեմ ծախելու, հիանալի հորթ:

Իտիրոն հազիվ ծիծաղը զսպելով բերում է ճերմակ հորթը:

Վարպետը ծիծաղը թաքցնելու համար հովհարը շարունակ բերանին էր պահում:

Գեմբեյը հորթը տեսնելուն պես դժգոհ մրթմրթում է.

– Սա հարյուր անգամ վատն է իմ հորթից:

Այստեղ արդեն վարպետն ու աշակերտը այլևս իրենց զսպել չեն կարողանում և այնպես բարձր են քրքջում, որ բոլոր հարևանները հավաքվում են ու հարցնում, թե ինչ է պատահել:

Այդ ժամանակ վարպետը պատմում է, թե ինչպես է պարծենկոտ Գեմբեյը երկու անգամ գնել նույն հորթը և հիմա էլ եկել է երրորդ անգամ գնելու:

Այստեղ արդեն հարևաններն էլ են սկսում ծիծաղել:

Երբ ծիծաղը մի քիչ հանդարտվում է, վարպետն ասում է.

– Գեմբեյ-սան, խոստացիր այլևս չպարծենալ, և ես հորթն էլ քեզ կտամ, փողն էլ:

Գեմբեյն ստիպված խոստանում է: Դե հո չէ՞ր կարող տուն գնալ առանց հորթի ու առանց փողի: Նա մի ավելի հաստ պարան է խնդրում, հորթը կապում ու քաշում-տանում:

Շուտով այս պատմությունն իրենց գյուղն էլ է հասնում: Դրանից հետո երբ Գեմբեյը պարծենում էր, որևէ մեկն ասում էր.

– Գեմբեյ-սան, պատմիր՝ տեսնենք, ինչպե՞ս նույն հորթը երեք անգամ գնեցիր:

Եվ այն ժամանակ պարծենկոտը հովհարը թափահարում էր ու լռում:

Պառավն ու աքլորը

Մի պառավ յոթ օր տունը չի ավլում: Մի օր էլ ավլում է ու մի շահի է ճարում: Շահին տալիս է, մածուն առնում: Մածունը տանում է, թարեքին դնում: Աքլորը գնում է, մածունը ուտում: Պառավը տեսնում է, մի ապտակ է տալիս: Աքլորն էլ ցատկում է, պառավին կտցում:

Պառավն առավոտ շուտ գնում է դատավորի մոտ, գանգատվում է, ասում.

– Պարո՛ն դատավոր, յոթ օր տունս չեմ ավլել:

– Շատ վատ բան ես դու արել,– ասում է դատավորը:

Պառավը թե՝

– Ու մի օր էլ ավլեցի:

– Ես արդեն քեզ հարգեցի,– ասում է դատավորը:

Պառավը թե՝

– Ու մի շահի ճարեցի:

– Բախտդ բերեց երևի,– ասում է դատավորը:

Պառավը թե՝

– Շահին տվի, մածուն առա:
– Ուտես՝ սիրտդ հովանա՛,– ասում է դատավորը:
Պառավը թե՝
– Տարա թարեքին դրի:
– Դրա տեղն էր երևի,– ասում է դատավորը:
Պառավը թե՝
– Աքլորն եկել էր, կտցե՛լ:
– Համն է երևի փորձել,– ասում է դատավորը:
Պառավը թե՝
– Մի լավ ապտակ կերցրի:
– Դաստիարակել ես, էլի՛,– ասում է դատավորը:
Պառավը թե՝
– Ցատկեց, աչքի՞ս էր հասել:
– Դե՛, սուրմա է քեզ քսել,– ծիծաղում է դատավորը:

Յոթ դևերի ախպերը

Ժամանակով մի մարդ ու կին են լինում:

Մի օր էս մարդ ու կինը վիճում են: Կինն ասում է.

– Մա՛րդ, մնացել ես տանը, ինձ ոչ մի բանով օգուտ չես տալիս: Մենք էլ միշտ նույն խեղճ ու կրակն ենք: Կամ կերթաս կաշխատես, կամ էլ թե չէ՝ թո՛ղ գնա իմ տնից:

Մարդն ասում է.

– Կնի՛կ, երկու հավկիթ տուր ինձ, ես կերթամ, դու՝ քո Աստված:

Մարդը գնում-գնում է, մի ջրաղացի է հանդիպում, մտնում է ներս, մի քիչ ալյուր է վերցնում, լցնում գրպանը ու ճանապարհը շարունակում: Շատ է գնում թե քիչ, հասնում է մի ամրոցի, ներս է մտնում, ման է գալիս ամրոցի մեջ, տեսնում է, որ մի տեղ՝ հեռվում, կրակ է երևում. գնում է ուղիղ դեպի կրակը: Գնում տեսնում է, որ յոթ դև նստած են կրակի շուրջբոլորը, մեծ պղինձը դրել են կրակին, իրենց համար փլավ են եփում:

Մոտենում է կրակին, ղայլանը[1] լցնում, ձեռքը մտցնում պղնձի տակ, կրակ հանում, դնում է ղայլանի վրա ու քաշում: Դևերը որ տեսնում են, շվարում են, ասում են իրար.

– Ախպերներ, էս ի՞նչ զորավոր մարդ էկավ էստեղ, որ մեզնից չվախեցավ: Էկավ, մեր պղնձի տակիցը կրակ հանեց, ուտում է:

Մարդն ասում է.

– Ելնեմ կանգնեմ, յոթ դևիդ էլ կտոր-կտոր անեմ, ծեփեմ ծառին. ի՞նչ եք նայում իրար ու փսփսում:

Դևերը վախվխելով ասում են.

– Ախպե՛ր ջան, մենք էլ հենց քեզ պես մի մարդ էինք փնտրում, դու մեզ՝ մեծ ախպեր, մենք քեզ՝ պստիկ ախպեր:

Փլավը եփվում է, նստում են, միասին ուտում: Դևերից մեկն ասում է.

– Մեզ փետ չկա, մենք պիտի գնանք սար, փետ բերենք:

Մարդն ասում է.

– Էլ ինչի՞ եք սպասում, եկեք գնանք:

Դևերը վերցնում են մի հաստ շղթա, գնում են, մարդն էլ իրենց հետ: Մարդը տեսնում է, որ չի կարողանում նրանց հետևից հասնել, հետ է ընկնում, ձայն է տալիս.

– Դուք մեծ ու պստիկ չգիտե՞ք. ե՞ս առաջ պիտի ընկնեմ, թե՞ դուք:

Դևերն ասում են.

– Դո՛ւ պիտի առաջ ընկնես:

Մարդն առաջ ընկած գնում է:

Գնալու ընթացքում դևերի ուժեղ շնչից նա առաջ է թռչում, ու էդպես հասնում են սար:

Մարդն ասում է դևերին.

– Ախպերներ, էսօր ես կշալակեմ փետը, կտանեմ:

Ասում են՝ լա՛վ:

---

[1] Նարգիլե

– Դե՛, բերե՛ք էդ ժնջիլը[2], գցեք էս սարի բոլորը, սարը դրե՛ք իմ շալակը, տանեմ տուն: Էլ ինչի՞ ամեն անգամ գանք սար:

Յոթ դևն էլ միաբերան ասում են.

– Չէ՛, ախպե՛ր, էդպիսի բան չի լինի. դու մեծ ախպեր, մենք պստիկ ախպեր, դու շալակես, մենք մնա՞նք:

– Հիմա կելնեմ, յոթիդ էլ կծեփեմ ծառին,– ասում է մարդը,– դուք սարն ինչի՞ չեք դնում իմ շալակը:

– Ախպե՛ր ջան,– ասում են դևերը,– սարը մենակ մերը չէ, խեղճ մարդիկ էլ կան, որ գալիս փետ են տանում: Դու որ սարը շալակես, էդ խեղճ մարդիկ էլ չեն կարող փետ տանել տուն:

– Դե,– ասում է մարդը,– եկեք ձեր ուզած չափով տարեք:

Դևերն իրենց կարողության չափ փայտ են կտրում, շալակում ու գնում են, մարդն էլ դատարկ, առանց բեռի, առաջ է ընկնում: Գալիս են տուն: Տուն են հասնում թե չէ, մարդն ասում է.

– Ամո՛թ ձեզ, մյուս անգամ ես ձեզ հետ փետի չեմ գա: Էս մի փշո՛ւրը շալակած բերեցիք, ես ի՞նչ անեմ...

Իրիկունը՝ ընթրելու ժամին, ուզում են կրակը վառել, որ մի բան եփեն ուտեն, մարդն ասում է.

– Ախպերնե՛ր, ես մի հոգի եմ, դուք՝ յոթ: Կարո՞ղ եք ինձ հետ գյուլաշ կպնել[3], իրար ուժ փորձենք:

– Ախպե՛ր, ինչպես կուզես,– ասում են դևերը, քո՛ խոսքն է:

– Հլա կանգնե՛ք,– ասում է մարդը,– ես ձեզ մի բան ասեմ,– առանց մտածելու ձեզ բռնեմ՝ ձեռներիս մեջ ճխլվե՛ք: Էկեք, ուրիշ բան անենք: Քարը ճխլենք, քարից ջուր հանենք:

Յոթ դևերը վախեցած իրար են նայում: Քարից ինչպե՞ս ջուր հանեն:

– Մարմար քար կա՞ էստեղ,– ասում է մարդը:

Ասում են՝ կա: Մարդն ասում է՝ բերե՛ք: Քարը բերում են, տալիս մարդուն: Մարդն առնում է քարն ու ասում.

---

[2] Շղթան

[3] Գոտեմարտել

– Տեսեք էս քարը: Հիմի քարից ջուր կհանեմ:

Քարը գցում է գրպանը, հավկիթը հանում գրպանից, ասում. «Յա՛, սուրբ Սուլուլիկ»,– ու հավկիթը սեղմում է, ասում. «Տեսեք՝ ջուրը գնաց»:

Դևերը վախեցած մեկ մեկու երես են նայում:

– Դե՛, ախպերներ, դուք էլ բերեք քարը, ճխլեցեք, ջուրը հանեք:

Դևերը քարը վերցնում են, սեղմում են, ճխլում, քարը փշրվում է, բայց ջուր չի ելնում: Մարդն ասում է.

– Եկեք, ավելի հեշտ բան ասեմ, գուցե կարողանաք:

– Ինչ,– հարցնում են դևերը:

– Մանր, ճերմակ քար առնենք մեր ձեռքը, փշրենք՝ տանք քամին տանի:

– Դե՛ արա, տեսնենք՝ ինչպե՞ս ես անում:

– Քար բերեք,– ասում է մարդը:

Քարը բերում են, տալիս մարդու ձեռքը: Մարդը քարն առնում է, գցում գրպանը, ալյուրը հանում, ձեռքի մեջ տրորում ու տալիս է քամուն, քամին տանում է: Ասում է.

– Ախպերնե՛ր, դուք էլ արեք:

Դևերը քարերն առնում են իրենց ձեռքը, ճխլում, ճխմռտում՝ քամին չի տանում: Էդ ժամանակ դևերը մտածում են ու իրար ասում.

– Ախպերնե՛ր, էկեք մի բան անենք: Թե չէ էս կրակ ուտող հողածինը մեզ էլ կուտի:

Մեկը հարցնում է.

– Բա ի՞նչ անենք:

Մյուսն ասում է.

– Ինչ պիտի անենք, բաժանվենք:

Կանչում են.

– Մա՛րդ:

Մարդն ասում է.

– Ինչ է, ախպերներ:

Դևերն ասում են.

– Արի բաժանվենք:

Մարդն ասում է.

– Բաժանվենք, բաժանվենք… Անամոթ շան որդիք: Ձեզ ինչ կա էստեղ: Խղճում եմ ձեզ: Որ չուզեմ, չեմ տա:

– Ախպեր, դու գիտես,– ասում են դևերը,– ինչպես ուզում ես, էնպես էլ թող լինի:

– Ես անաստվածություն չեմ անի, երկու փայն ինձ, մի փայը՝ ձեզ:

Դևերն իրար երես են նայում, իրար ասում. «Էս մարդուց մենք պրծնենք. ինչ ուզում է՝ տանք»: Մարդուն ասում են. «Արի էրթանք փողը կիսենք»: Գնում են, փողը բաժանում: Մարդուն երկու պարկ ոսկի է բաժին հասնում: Մարդն ասում է.

– Շան որդիք, ամոթ չէ՞ ինձ, էս երկու թաշկինակ ոսկին առնեմ իմ ձեռը, էրթամ իմ երկիր:

Դևերն ասում են.

– Ախպեր, ինչպես ուզում ես, էնպես էլ անենք: Միասին առնենք, էրթանք:

Դևերից մեկը շալակում է ոսկին, մարդն ընկնում է առաջ, գնում են: Դևի շունչ առնելու հետ մարդը թռչում, մե՛կ ճանապարհի էս կողմն է ընկնում, մե՛կ՝ էն կողմը: Էսպես գնալով՝ հասնում են մարդու տուն: Դևը որ բեռը գետնին է դնում, խորը շունչ է քաշում, մարդը թռչում կպչում է առաստաղին: Դևը հարցնում է.

– Ախպեր ջան, ինչի՞ ելար էդտեղ:

– Ելա, որ էս գերանը պոկեմ, գլուխդ ջարդեմ:

Դևը վախից թողնում փախչում է: Մարդն էլ ասում է իր կնոջը.

– Կնի՛կ, դու ինձ տնից դուրս արեցիր: Հիմի ասա՛, ես էլ որ էս փողից քեզ չտամ, ինչ կանես:

– Ա՛յ մարդ, ինչի դու անաստվա՞ծ ես,– ասում է կինը:

– Կնի՛կ,– ասում է մարդը,– ես քեզ խղճում եմ, փողն էլ երկուսիս համար է: Իրար հետ սիրով ապրենք մինչև մեր կյանքի վերջը:

Հենց էստեղ էլ հեքիաթը վերջանում է:

Երկնքից երեք խնձոր է իջնում, մեկը՝ ասողին, մեկը՝ գրողին, մեկն էլ՝ լսողներին:

Երեքն ու մեկը

Ումատրա կղզում ապրում էր մի աղքատ գյուղացի: Նրա փոքրիկ հողակտորի վրա աճում էր միայն ու միայն բանանի մի կենտ ծառ:

Մի անգամ այդ աղքատի խրճիթի մոտով անցնում են երեք ճամփորդ՝ մի վանական, մի հեքիմ և մի վաշխառու:

Առաջինը վաշխառուն է տեսնում բանանի ծառը: Նա իր ճամփորդ ընկերներին այսպես է ասում.

- Մենք երեքն ենք, գյուղացին՝ մենակ: Նա ինչպե՞ս կարող է թույլ չտալ մեզ վայելելու բանանները:

Եվ անազնիվ մարդիկ շատ հանգիստ, հենց գյուղացու աչքի առաջ սկսում են ուտել նրա միակ ծառի պտուղները:

- Դուք այդ ի՞նչ եք անում, պատվելի պարոննե՛ր,- բղավում է հուսահատված աղքատը:- Դրանք չէ՞ որ իմ բաններն են:

- Դե, ի՞նչ անենք, որ քոնն են,- ասում է հանդուգն վանականը:

- Մեզ դուր են գալիս, մենք էլ ուտում ենք,- ավելացնում է հեքիմը:

- Մի՛ խանգարիր մեզ, թե չէ քեզ համար վատ կլինի,- սպառնում է վաշխառուն:

«Նրանք երեքն են, իսկ ես՝ մենակ,- մտածում է գյուղացին: Իմ ուժը նրանց չի պատի: Բայց ես հո չեմ կարող հանգիստ նայել, թե սրանք ինչպես են տիրություն անում իմ հողում»:

Եվ, դառնալով անկոչ հյուրերին, ասում է.

- Ինձ համար մեծ պատիվ է տեսնել իմ տանը երկնքի ծառային, հոչակավոր հեքիմին: Բայց ես ապշում եմ, որ ձեզ հետ կա մի այնպիսի արհամարհված մարդ, ինչպիսին այդ վաշխառուն է: Նայեցեք, որքան է նա ագահ, մինչ դուք կքաղեք մի բանան, նա հինգն է քաղում, այն էլ ամենահասածները:

Այդ ժամանակ վանականը զայրույթով բացականչում է.

- Ագահ վաշխառու, դու երկնքի ծառայի նկատմամբ անհարգելի վերաբերմունք ես ցույց տվել: Հեռացիր այստեղից, մինչև մենք քեզ հետ դատաստան կտեսնենք:

«Նրանք երեքն են, իսկ ես՝ մենակ»,- մտածում է սարսափած վաշխառուն և շտապում անհետանալ:

Վանականն ու հեքիմը առաջվա նման շարունակում են ծառից քաղել բանանները:

Այդ ժամանակ գյուղացին դիմում է հեքիմին այսպիսի խոսքերով.

- Մի՛ բարկացեք ինձ վրա, հարգելի պարո՛ն, բայց ինձ թվում է, որ Ձեր գիտությունը անկարող է բուժել մարդկային ցավերը:

- Դու ի՞նչ ես հասկանում մեր գիտությունից, ա՛յ տգետ: Շատ մարդիկ են առողջանում իմ խորհուրդներով:

Իսկ ես կարծում եմ, որ նրանք առողջանում են, որովհետև այդպես է ցանկանում Երկինքը:

- Ի՞նչ գործ ունի այստեղ Երկինքը,- բացականչում է հեքիմը: Մարդկանց ես եմ բուժում և ոչ թե Երկինքը:

- Ի՞նչ ես դու խոսում, պիղծ մարդ,- զայրանում է վանականը:- Դու համարձակվում ես կասկածել Երկնքի զորության վրա՞:

- Հայր սուրբ, նա վիրավորեց Երկնքին,- գոռում է վանականի

ետևից գյուղացին: Մեծ մեղք է այսպիսի անհավատի կողքին գտնվելը:

- Հեռացի՛ր աչքիս առաջից հենց հիմա,- աղաղակում է վանականը:

«Նրանք երկուսն են, իսկ ես՝ մենակ»,- մտածում է հեքիմը և, մոռանալով բանանների մասին, թողնում է ու փախչում:

Այդ ժամանակ, երբ գյուղացին ու վանականը մնում են մենակ, գյուղացին վանականին հարցնում է.

- Ո՞վ դու, որ բազում սուրբ օրենքներ ես ուսումնասիրում, ասա, չե՞ն արգելում արդյոք այդ օրենքները ուրիշների ունեցվածքը յուրացնելը:

- Այո, դա այդպես է,- հաստատում է վանականը:- Հապա ինչո՞ւ ես դու խժռում այդ բանանները, որոնք քոնը չեն:

Մինչ վանականը կմտածեր, թե նրան ինչ պատասխանի, գյուղացին վերցնում է ծանր փայտը և, ցույց տալով ճանապարհը, վանականին ասում.

- Հեռացե՛ք, հայր սուրբ, գնացեք ձեր ճամփան և այսուհետև չհամարձակվեք մոտենալ իմ ծառին:

Վանականը ծուռ-ծուռ նայում է գյուղացու ծանր փայտին և շտապ հեռանում:

Այսպես հնարամիտ գյուղացին ազատվում է իր անկոչ հյուրերից:

Հեքիաթասացը

Լինում է, չի լինում՝ մի թագավոր: Նա աշխարհում ավելի շատ սիրում էր հեքիաթներ լսել և իր ողջ ազատ ժամանակը տրամադրում էր հազար ու մի պատմություններ լսելուն, որ նրան պատմում էին իր երկրի հեքիաթասացները: Բայց գալիս է մի պահ, որ Շոա երկրում այլևս ոչ մի նոր հեքիաթ չէր մնացել:

Հեքիաթների սիրահար թագավորի մասին լսել էին նաև հարևան երկրներում: Շրջիկ երգիչներն ու հեքիաթասացները գալիս էին Շոա, որ նոր հեքիաթների համար պարգև ստանան: Բայց թագավորը որքան շատ հեքիաթներ էր լսում, այնքան նվազում էր նրա չլսած հեքիաթների թիվը: Վերջապես թագավորը հուսահատությունից հայտարարում է, որ եթե որևէ հեքիաթասաց իրեն ստիպի բղավել. «Բավակա՛ն է, այլևս չեմ ուզում լսել», ուրեմն, կստանա մեծ հողաբաժին և ռասի՝ իշխանի տիտղոս:

Մի անգամ մի գյուղացի է գալիս թագավորի մոտ և առաջարկում հեքիաթներ պատմել այնքան ժամանակ, մինչև որ թագա-

վորն ասի, թե այլևս չի ուզում լսել: Թագավորը ժպտում է:

– Ինձ մոտ եկել են Հաբեշստանի ամենալավ հեքիաթասացները, բայց նույնիսկ նրանք չեն կարողացել այնքան հեքիաթներ պատմել, որ ես գոհ մնամ,– ասում է թագավորը,– իսկ դու եկար ու քո խեղճ ու կրակ տեղով ուզում ես հող և իշխանի տիտղոս ստանալ: Դե լավ, կարող ես փորձել: Սկսի՛ր:

Գյուղացին հարմար տեղավորվում է գորգին և սկսում.

– Մի գյուղացի էր ապրում: Նա ցորեն է ցանում, իսկ երբ ցորենը հասնում է, հնձում է, կալսում ու իր ամբողջ թանկարժեք հացահատիկը լցնում ամբարը: Բերքը շատ առատ էր, ավելի առատ, քան նախորդ տարիներին ստացել էր: Հիմա լսեք իմ հեքիաթի ամենակարևոր տեղը: Ամբարը մի չնչին անցք է ունենում, որի մեջ հազիվ մի ծղոտ մտներ: Երբ գյուղացին ամբողջ ցորենը լցնում է ամբարը, այդ անցքի միջով մի մրջյուն է ներս մտնում: Մրջյունը տեսնում է ամբարի ցորենը, մի հատիկ վերցնում և տանում է իր մրջնուհուն:

– Հա-հա՛,– այդ պատմությամբ հետաքրքրված՝ հռհռում է թագավորը: Նա դեռ ոչ մի անգամ չէր լսել այդ հեքիաթը:

– Մյուս օրը էլի մի մրջյուն եկավ ու հատիկ տարավ:

– Այո՛, այո՛, հասկանում եմ, շարունակի՛ր պատմել,– առաջարկում է թագավորը:

– Մյուս օրը էլի մի մրջյուն եկավ ու էլի մի հատիկ տարավ: Իսկ հետո էլի մի մրջյուն եկավ ու էլի մի հատիկ տարավ:

– Իզուր դատարկ բանի վրա ժամանակ չկորցնենք,– ասում է թագավորը,– առաջ անցիր:

– Մյուս օրը էլի մի մրջյուն եկավ,– շարունակում է գյուղացին:

– Շարունակի՛ր,– խնդրում է թագավորը,– հետո ի՞նչ եղավ:

– Բայց իմ պատմության մեջ այնքան մրջյուններ կան,– բացականչում է գյուղացին:– Մյուս օրը էլի մի մրջյուն եկավ, ցորենի հատիկը տանելու և...

– Ո՛չ, ո՛չ, այդպիսի բան չի լինում,– ասում է թագավորը:

– Բայց, ախր, դա իմ հեքիաթի էությունն է,– պատասխանում է գյուղացին:– Իսկ հաջորդ օրը էլի մի մրջյուն եկավ ու էլի մի հատիկ տարավ:

– Բայց ես այդ ամենը հասկանում եմ, արի դրան վերջ տանք և իմանանք, թե հետո, հետո՞ ինչ եղավ,– աղաչում է թագավորը:

– Իսկ մյուս օրը էլի մի մրջյուն եկավ ու իր հատիկը վերցրեց: Իսկ հաջորդ օրը...

– Բավական է, այլևս պետք չէ,– բացականչում է թագավորը:

– Հեքիաթը պետք է հաջորդականությամբ պատմել,– ասում է գյուղացին:– Չէ՞ որ ամբարը դեռ ցորենով լիքն է ու պետք է դատարկել: Հեքիաթում այդպես է: Ու հաջորդ օրը...

– Ո՛չ, ո՛չ, վերջացրո՛ւ, բավական է,– բղավում է թագավորը:

– Իսկ մյուս օրը էլի մի մրջյուն...

– Բավական է, ես այլևս չեմ կարող լսել: Հողը և իշխանի տիտղոսը քոնն են,– բացականչում է թագավորը և սենյակից դուրս փախչում:

Մարդիկ հատկապես դա նկատի ունեն, երբ ասում են. «Երբեմն ցորենի մի հատիկն անգամ մարդուն հաջողություն է բերում»:

Երկու հարևան

Ժամանակով երկու հարևան են լինում: Մի օր, երբ նրանցից մեկը ցորեն էր կրում, սայլը շրջվում է, խրձերը դեսուդեն են ընկնում, ինքը մոլորվում, կանգնում է: Մյուս հարևանը գալիս, օգնում է, սայլը նորից բարձում են ու ճանապարհ ընկնում:

– Ես որ չլինեի,– ասում է օգնության հասածը,– դու մենակ կարողանալո՞ւ էիր սայլը բարձել, հը՞: Ի՞նչ էիր անելու:

– Շնորհակալ եմ,– ասում է սայլատերը,– իհարկե, մարդը մենակ սելը բարձել չի կարող:

Մի քիչ էլ են գնում, օգնության հասած հարևանը դարձյալ ասում է:

– Հը՛, ո՞նց է, տեսա՞ր՝ ոնց օգնեցի, սելը բարձեցինք:

– Բա հարևանությունն էլ ինչի՞ համար է, որ նեղության մեջ իրար չհասնենք,– պատասխանում է սայլատերը:

Մի քիչ էլ են առաջ գնում:

– Հը՛, ես որ չլինեի, դու լավ էլ սել բարձող էիր, բա չէ՞,– ասում է օգնության հասած հարևանը:

Սայլատերը տեսնում է, որ հարևանը չափն անցավ, ձայն է տալիս.

– Հռ, գոմեշներ, կանգնե՛ք:

Նա ինքն իր ձեռքով սայլը շրջում է, խրձերը ցրում աջուձախ ու դառնում հարևանին.

– Ախպե՛ր,– ասում է,– պրծա՞նք քեզնից: Ոնց եկել ես, էնպես էլ գնա՛ քո ճամփան: Էսօրվանից քո օգնությունը քո գլուխն ուտի. ինձ պետք չէ: Հոգիս բերանս բերեցիր էլի՛:

Անզգամ կինը

Լինում է, չի լինում՝ մի մարդ ու կին են լինում: Շատ աղքատ ու անճար են ապրում: Ամուսինը սրա-նրա մոտ մշակություն էր անում, ուրիշների անասուններն էր տանում արածեցնում, գնում էր հանդից ցախ ու չոփ հավաքում, վաճառում, մի քիչ փող վաստակում, որ կնոջը պահի: Մի խոսքով՝ շատ աշխատասեր մարդ էր, բայց կինը անզգամ, տնաքանդ, ոնց որ ասում են՝ Աստծու երեսից թափած մեկն էր: Ամեն Աստծու օր ամուսնու հոգին հանում էր:

– Ա՛յ մարդ,– ասում էր,– գնա՛ ինձ համար էս առ, էն առ, էս բեր, էն բեր: Էս չիթը չեմ հավանում, գնա՛ էն մյուսից բեր:

Այսպես խեղճ մարդու հոգին հանում էր: Ամուսինը խրատում էր նրան.

– Ա՛յ կնիկ,– ասում էր հաճախ,– ախր էսպես չի՛ լինի: Տեսնում ես՝ աղքատ, օրվա հացի կարոտ մարդիկ ենք, հազիվ ենք գլուխներս պահում, մեր ոտները պիտի մեր վերմակի չափով մեկնենք:

Բայց ո՞ւմ ես ասում. կինն էլի իր էշն էր քշում:

Երբ ամուսնու հոգին շատ է հանում, ամուսինը որոշում է գլուխն առնել, գնալ՝ կնոջ ձեռքից ազատվել: Օրերից մի օր էլ իր հետ մի քիչ ուտելիք է վերցնում ու գնում:

Գնու՛մ-գնու՛մ, շատն ու քիչը Աստված գիտի, գալիս է մի ամայի տեղ: Մտքերի մեջ ընկած քայլում է, մեկ էլ տեսնում է՝ գետնին մի մեծ, կլոր քար: Հազիվհազ այդ քարը մի կողմ է տանում, տեսնում, որ տակը խոր, անտակ հոր է, խորքից էլ ղժվժոց, աղմուկ է գալիս: Վախից քարը նորից տեղն է դնում:

«Էս լավ եղավ, որ էս հորը գտա,– մտածում է:– Սրանից լավ տեղ չկա. գնամ կնկաս խաբելով բերեմ, գցեմ էստեղ, հոգիս ազատեմ»: Ամուսինը հետ է գալիս տուն:

– Ա՛յ կնիկ,– ասում է,– էսպես, էսպես, էսօր գնացել էի հանդը չոփ հավաքելու, տեսա՝ գետնին մի մեծ, կլոր քար է ընկած: Բարձրացրի՝ ի՞նչ տեսնեմ. մի մեծ հոր՝ մեջը լիքը գանձ՝ էլ ոսկի մատանիներ, էլ մարգարիտներ, էլ մարջաններ, հազար ու մի տեսակ անգին քարեր: Էնպես էին պսպղում, որ մարդու քեֆ էր գալիս:

– Ճի՞շտ,– հարցնում է կինը:

– Ճիշտ: Չես հավատում՝ գնանք տես:

– Գնանք,– ուրախանում է կինը:

Առավոտ վաղ մարդ ու կին վեր են կենում, մի երկար պարան, մեկ էլ ճանապարհի համար պաշար են վերցնում ու դուրս գալիս տնից: Գալի՜ս, գալիս, հասնում են հորի մոտ: Ամուսինը քարը բարձրացնում, ասում է.

– Բե՛ր, պարանը կապենք մեջքիս, իջնեմ ներքև, ինչ կա-չկա՝ հավաքեմ բերեմ:

– Չէ՛, ա՛յ մարդ, ես պիտի իջնեմ: Դու կգնաս, լավ բաները կվերցնես, վատը կթողնես ինձ:

Կույրն ի՞նչ կուզի՝ երկու աչք. մարդն էլ հենց դա էր ուզում: Բերում, պարանը կապում է կնոջ մեջքին, կինն իջնում է հորը: Հենց որ հասնում է հատակին, ամուսինը պարանի ծայրը ձեռքից

բաց է թողնում, հետո էլ քարը դնում տեղը, որ կինը դուրս չգա:

– Սրանից հետո ինչ ուզում է՝ լինի,– ասում է ինքն իրեն,– հո պրծա՛ անզգամ կնկաս ձեռքից: Որ էն աշխարհում կպրե կարասի մեջ էլ տնկվեմ, դժոխքի կրակում էլ վառվեմ, տապակվեմ՝ պետքս չէ:

Մարդը գալիս է տուն:

Անցնում է մի օր, երկու օր, մի շաբաթ: «Գնամ տեսնեմ կնիկս ի՞նչ հալի է, ո՞ղջ է, մեռա՞ծ է»,– մտածում է մարդն ու ճանապարհ ընկնում: Հասնում է հորի մոտ, ականջ դնում, և ի՞նչ… Հորի միջից այնպիսի հարայ-հրոց է գալիս, այնպիսի աղմուկ-աղաղակ, որ Աստված փրկի, ազատի: Քարը մի քիչ հրում է մի կողմ ու լսում:

– Աստծու՛ սիրուն, ա՛յ հողածին, ի՞նչ կլինի էդ քարը դեն գցես, դուրս գանք, էս անզգամ կնկա ձեռից պրծնենք: Մի օր էլ մենք քո լավության տակից դուրս կգանք:

Մարդու մեղքը գալիս է, քարը բարձրացնում է: Մեկ էլ իրար հետևից սատանաները դուրս են թռչում ու հորի չորս կողմը կանգնում: Սրանց որ տեսնում է, վախից քիչ է մնում լեղին պատռվի: Բայց սատանաների գլխավորը մոտենում է նրան ու ասում.

– Մի՛ վախեցիր: Դու որ մեզ էսպես լավություն արեցիր, էն անզգամ կնկա ձեռից ազատեցիր, մենք էլ քեզ պիտի մի լավություն անենք: Ես կգնամ, կմտնեմ թագավորի աղջկա փորը: Ինչ դեղ ու դարման էլ անեն, ինչ հեքիմ էլ բերեն, դուրս չեմ գա: Երբ կլսես էդ մասին, կգաս թագավորի մոտ, կասես՝ թագավո՛րն ապրած կենա, ես քո աղջկան կլավացնեմ: Հենց մտնես աղջկա սենյակը, ես տեղնուտեղը դուրս կգամ կգնամ: Աղջիկը կլավանա, կդառնա մորից մեկ:

Սատանան սա ասում ու աներևութանում է: Մարդն էլ գալիս է իր տուն:

Ժամանակ է անցնում: Մեկ էլ լուր է տարածվում, թե թագավորի աղջիկը գժվել է, քառասուն տակ շղթայով ձեռք ու ոտքը կապել

են, գցել մի սենյակ: Աշխարհում էլ բժիշկ չի մնացել, որ չբերեն մոտը, բայց՝ ոչ մի օգուտ. ճար, հնար չկա:

Մարդը, երբ այս մասին լսում է, վեր է կենում, գնում թագավորի մոտ:

– Ինչո՞ւ ես եկել,– հարցնում է թագավորը:

– Ես հեքիմ եմ,– ասում է,– եկել եմ աղջկադ լավացնեմ:

– Թե կարողացար բուժել, ի՞նչ ուզես՝ կտամ,– ասում է թագավորը:

Մարդուն տանում են թագավորի աղջկա սենյակը: Տեսնում է, որ, իրոք, աղջկա ձեռքերն ու ոտքերը քառասուն տակ շղթայով կապված են: Մոտենում է աղջկան, ինքն իրեն փնթփնթում՝ իբրև թե աղոթք է անում: Սատանան նրան հենց տեսնում է, տեղնուտեղը դուրս է գալիս աղջկա փորից:

– Տե՛ս,– ասում է սատանան,– ես էստեղից գնում եմ Հնդկաստանի թագավորի աղջկա փորը մտնեմ: Չլինեմ, չիմանամ՝ գաս էնտեղ, հա՛, թե չէ, իմացի՛ր, նրան կթողնեմ, քո փորը կմտնեմ:

Ասում ու անհետանում է:

Այս մարդը շղթաները քանդում, աղջկան բերում է թագավորի մոտ: Թագավորը տեսնում է, որ աղջիկն առողջացել է, դարձել մորից մեկ: Ուրախանում, աշխարհով մին է լինում ու ասում.

– Ա՛յ մարդ, ի՞նչ ուզես՝ կտամ:

– Թագավո՛րն ապրած կենա, ինչ էլ տաս, համաձայն եմ,– պատասխանում է մարդը:

– Որ էդպես է, աղջկաս քեզ եմ տալիս,– ասում է թագավորը: – Տա՛ր, մորդ կաթի պես քեզ հալալ լինի: Դու որ չլինեիր, նրան լավացնելու հնար չէր լինի:

Թագավորն աղջկան ամուսնացնում է այս մարդու հետ, յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում, ուրախանում:

Հիմա լուր տանք սատանայի մասին: Սատանան գնում, մտնում է Հնդկաստանի թագավորի աղջկա փորը: Աշխարհում

որքան հեքիմ ու բժիշկ կար, գալիս են, բայց ոչ ոք չի կարողանում աղջկան օգնել: Ի վերջո թագավորին հայտնում են, թե՝ այսպես, այսպես, թե լավացրեց՝ այսինչ երկրի թագավորի փեսան կլավացնի, թե չէ՝ ուրեմն ճար չկա: Հնդկաստանի թագավորը նույն պահին պատվիրակ է ուղարկում այդ երկիր, խնդրում, որ թագավորի փեսան գա՝ իր աղջկան օգնելու: «Թե չեկավ,– ասում է,– մեծ զորք եմ վերցնելու ու գամ կռիվ»:

Հնդկաստանի թագավորի պատվիրակը գալիս է, գլուխ տալիս այս մյուս թագավորին ու ինչ որ կա, հայտնում:

– Թագավո՛րն ապրած կենա,– ասում է,– Հնդկաստանի թագավորի աղջիկը գժվել է: Լսել ենք, որ քո փեսան էսպես, էսպես… հեքիմ է: Իմ տերը կանչում է նրան, որ իր աղջկան էլ լավացնի:

Խեղճ փեսան մնացել էր երկու ջրի արանքում[1]. չգնա՝ երկու թագավորի միջև պատերազմ է սկսվելու, գնա՝ բա որ սատանան մտնի իր փո՛ղը: Մտածում, մտածում ու որոշում է. «Կգնամ, ինչ լինում է՝ լինի»:

Պատրաստություն է տեսնում, Հնդկաստանի թագավորի պատվիրակին էլ հետը վերցնում ու ճանապարհ է ընկնում: Գնո՛ւմ է, գնո՛ւմ, մի օր, երկու օր, մի շաբաթ… շատն ու քիչը Աստված գիտի, հասնում է Հնդկաստան, գնում թագավորի պալատ, թագավորին գլուխ տալիս, կանգնում է:

– Հեքիմը դո՛ւ ես,– հարցնում է թագավորը:

– Հա՛, թագավո՛րն ապրած կենա, ես եմ,– ասում է:

– Իմ աղջկան կարո՛ղ ես բուժել:

– Աստծու գործն է,– ասում է,– թագավո՛ղը ողջ կենա:

Նրան տանում են թագավորի աղջկա սենյակ: Տեսնում է՝ ահա, աղջիկը շղթաներով կապկպված է: Երբ սատանան նրան տեսնում է, ձայն է տալիս.

---

[1] Դարձված՝ անելանելի վիճակ. կա նաև «երկու քարի արանք» տարբերակը

– Ա՛յ մարդ, ես քեզ չասացի՞ չգա՛ս: Դու ո՞նց սիրտ արիր՝ եկար:

– Սո՛ւս, սատանա՛ ախպեր,– ասում է մարդը,– ես հո չեմ եկել սրան լավացնեմ: Եկել եմ՝ քեզ իմաց տամ, որ էն անզգամ կնիկը հորի միջից դուրս է եկել, քո հետևից գալիս է: Լսել է, որ եկել ես Հնդկաստան, ուր որ է՝ կհասնի էստեղ: Ճար ունես՝ տե՛ս:

– Ամա՛ն, Աստծու՛ սիրուն,– ասում է սատանան,– որ էդպես է, դուրս գամ՝ փախչեմ, քանի չի գտել ինձ:

Ասում է, դուրս թռչում աղջկա փորից ու փախչում: Աղջիկը տեղնուտեղն առողջանում է: Մարդը շղթաները քանդում է, աղջկան տանում թագավորի մոտ: Թագավորն ուրախանում, աշխարհով մին է լինում, բերում ու իր քաշով մեկ ոսկի է տալիս այս մարդուն, ճանապարհում իր երկիրը:

Հիմար փեսացուն

Թայ-Նգուեն գավառում ապրել է մի այրի կին: Նա ունեցել է մի հիմար տղա Վյետ Սոյ անունով: Մի անգամ Վյետ Սոյը ինչ-որ խրճիթի դռան մոտ նկատում է մի շատ գեղեցիկ աղջկա: Գալիս է տուն ու ասում.

- Մայրիկ, մեր գյուղի ծայրում ես մի շատ գեղեցիկ աղջիկ եմ տեսել: Թույլ տուր ինձ նրա հետ ամուսնանալ:

- Ամուսնացիր, եթե նա քեզ կուզի,- ասում է մայրը:

- Իսկ ես ինչպե՞ս իմանամ, նա համաձա՞յն է իմ կինը լինել, թե՞ ոչ:

- Աղջկան Բետել[1] տար: Եթե նա չմերժեց, ուրեմն դու նրան դուր ես գալիս: Եթե մերժեց, ապա քեզ համար ուրիշ հարսնացու փնտրիր: Այդպես է մեր երկրի սովորությունը:

Առավոտյան, երբ Վյետ Սոյը պատրաստում է բետելը, մայրը ասում է.

- Հարսնացուի ծնողների նկատմամբ հարգանքով եղիր:

[1] Բետել – բետելի կծու տերևի մեջ փաթաթված արմավի կաղին և կրի մի կտոր:

Չծուլանաս անել այն, ինչ որ հարսնացուիդ հայրը պետք է անի. Կռահիր նրա բոլոր ցանկությունները:

- Ես քո բոլոր խոսքերը կհիշեմ, մայրիկ,- խոտանում է հիմար տղան:

Եվ ահա Վյետ Սոյը գալիս է այն խրճիթը, որտեղ ապրում էր գեղեցկուհին: Վեյտ Սոյը նրան տալիս է բետելը, և նա ընդունում է: Վյետ Սոյը ուրախանում է և մտածում. «Այժմ հարկավոր է մայրիկի երկրորդ խորհուրդը կատարել,- չծուլանալ անել այն, ինչ պետք է անի հարսնացուհի հայրը: Կռահել նրա բոլոր ցանկությունները»:

Եվ երբ Վյետ Սոյը տեսնում է, որ հարսնացուի հայրը կացինը վերցնում է և խրճիթից դուրս գալիս: Նա տեղից թռչում է, վերցնում է երկրորդ կացինը և շտապ գնում ծերուկի ետևից: Ծերուկը հասնում է մինչև անտառ և կանգ առնում չորացած արմավենու տակ: Հենց որ կացինը թափով բարձրացնում է, Վեյտ Սոյը նրա ձեռքից բռնում է ու ասում.

- Թույլ տվեք ինքս կտրեմ արմավենին:

- Կտրիր, ասում է գոհ ծերուկը և մոտենում բամբուկի ծառին:

Բայց կացինը վերցրած-չվերցրած՝ նորից է կանգնեցնում նրան.

- Թույլ տվեք, որ ես ինքս կտրեմ այդ ծառը:

- Եթե արմավենու ծառը քո ուժի բանը չէ, բամ բուկը կտրիր,- ասում է ծերուկը և նորից քայլերն ուղղում դեպի արմավենին:

Նա չի հասցնում կացնով խփել ծառին, երբ Վեյտ Սոյը նորից հայտնվում է նրա մոտ:

- Ո՛չ, ո՛չ,- ասում է հիմար փեսացուն,- ես իմ պարտականությունը գիտեմ: Հիմա ես այդ ծառը կտրեմ:

«Սա, ըստ երևույթին, խելագար է»,- տագնապով մտածում է ծերուկը, իսկ բարձրաձայն ասում է.

- Լավ, կտրիր արմավենին, իսկ ես այս բամբուկը կտապալեմ:

Եվ նա գնում է դեպի բամբուկի ծառը:

Եվ նորից, հազիվ կացնի վրա կռացած, Վյետ Սոյը նրա ձեռքից քաշում է ու ասում.

- Ձեզ նեղություն մի տվեք: Ես ինքս կկտրեմ այդ ծառը:

«Սա որոշակիորեն խելագար է», մտածում է վախեցած ծերուկը և իրեն մի կերպ գցում տուն:

«Արա այն բոլորը, ինչ կանի հարսնացուի հայրը»,- հիշում է Վյետ Սոյը մոր խոսքերը և վազում ծերուկի ետևից:

Երբ ծերուկը տեսնում է, որ Վյետ Սոյը վազում է իր ետևից, նա սարսափից ընկնում է թփերի վրա ու գլխարկը մնում թփի ճյուղից կախված: Հենց որ Վյետ Սոյը հասնում է այդ թփերին, նա իր նոր գլխարկը հանում է և կախում այդ նույն թփից:

Ծերուկի համար դժվար է լինում կացնով վազել, և նա շպրտում է այն խոտերի մեջ: Այդ տեսնելով՝ Վյետ Սոյն էլ իր կացինն է շպրտում:

Վերջապես, վախից շունչը կտրված, ծերուկը սլանում է մինչև գյուղ, ընկնում իր խրճիթը և բղավում.

- Վյետ Սոյը խելքը գցել է: Նա իմ ետևից կացնով վազում է, ուզում է ինձ սպանել: Նա ձեզ էլ կսպանի: Թաքնվեցեք այդ խելագարից:

Այդ խոսքերը լսելով՝ աղջիկն ու մայրը թաքնվում են մութ անկյունում: Ծերուկն էլ մտնում է բրնձի պարկի մեջ: Այդ ժամանակ խրճիթ է վազում Վյետ Սոյը: Նա տեսնում է, որ հարսնացուի հայրը մտնում է պարկը, ինքն էլ է մտնում նրա մեջ: Իսկ կինն ու աղջիկը այդ ընթացքում աղաղակում են:

- Փրկեցեք: Օգնեցեք: Սպանում են:

Եվ ծերուկն էլ է ձայնակցում ներսից.

- Փրկեցեք: Օգնեցե՛ք: Սպանում են:

Վյետ Սոյը մոր խոսքը հիշում է և բոլորի հետ միասին սկսում ինքն էլ գոռալ որքան ուժը կպատի.

- Փրկեցեք: Օգնեցեք: Սպանում են:

Դե պարզ է, որ այդ աղաղակների վրա գյուղը վազում է խրճիթ: Մարդիկ պարկից քաշում հանում են վախեցած ծերուկին: Ծերուկը թափ է տալիս իր վրայից բրնձի թեփերը և բարկացած դիմում փեսացուին.

- Կորի՛ր իմ տնից:

Վյետ Սոյը գնում է տուն: Նա ամբողջ ճանապարհին մտածում է այն մասին, թե ինչու իրեն վռնդեցին: Բայց այդպես էլ գլխի չի ընկնում: Ասում են, որ մինչև հիմա էլ Վյետ Սոյը չի ամուսնացել, միշտ մտածում է, թե ինչո՞վ չկարողացավ գոհացնել իր հարսնացուի հորը:

Կիկոսի մահը

Մի աղքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են երեք աղջիկ:

Մի օր հերը աշխատելիս է լինում, ծարավում է, մեծ աղջկանը ջուրն է ղրկում: Էս աղջիկը կուժն առնում է գնում աղբյուրը: Աղբրի գլխին մի բարձր ծառ է լինում: Էս ծառը որ տեսնում է՝ իրեն-իրեն միտք է անում.

– Հիմի որ ես մարդի գնամ ու մի որդի ունենամ, անունն էլ դնենք Կիկոս: Կիկոսը գա էս ծառին բարձրանա ու վեր ընկնի, քարովը դիպչի, մեռնի...

– Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ...

Տեղնուտեղը ծառի տակին նստում է, սկսում է սուգ անել:

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըդակը պոպոզ,
Անունը Կիկոս.

Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՛յ, Կիկոս ջան,
Վա՛յ, որդի ջան...

Մերն սպասում է, սպասում, տեսնում է չեկավ, միջնեկ աղջկանն է ղրկում: Ասում է.

– Գնա՛ մի տես, քույրդ ընչի ուշացավ:

Միջնեկ աղջիկն է գնում:

Մեծ քույրը սրան որ հեռվից տեսնում է՝ ձենն ավելի է բարձրացնում:

– Արի՜, արի՜, անբախտ մորքուր, տես քո Կիկոսն ի՞նչ եղավ:

– Ի՞նչ Կիկոս:

– Բա չես ասիլ.

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըդակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՛յ, Կիկոս ջան,
Վա՛յ, որդի ջան...

– Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ,– գոռում է միջնեկ քույրը, նստում է մեծ քրոջ կողքին, ու սկսում են միասին սուգ անել:

Մերն սպասում է, սպասում, տեսնում է չեկան, պստիկ աղջկանն է ղրկում: Ասում է.

– Աղջի, մի գնա տես քույրերդ ի՞նչ եղան: Գնացին, ետ չեկան:

Հիմի պստիկ աղջիկն է գնում: Գնում է, տեսնում երկու

քույրերն էլ աղբրի գլխին նստած լաց են լինում:

– Բա՛, ընչի՞ եք լաց ըլում:

Մեծ քույրը թե՝ բա չես ասիլ.

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըդակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՜յ, Կիկոս ջան,
Վա՜յ, որդի ջան...

– Վա՜յ քու մորքուրին, Կիկոս ջան, վա՜յ,– սա էլ է գլխին տալիս ու մյուսների կողքին նստում, ձեն-ձենի տալիս:

Մերն սպասում է, սպասում, տեսնում է աղջիկները չեկան, ինքն է գնում:

Հեռվից իրենց մորը տեսնում են թե չէ՝ երեք աղջիկն էլ կանչում են.

– Արի՛, արի՛, անբախտ տատի, տե՛ս թոռանդ գլուխն ինչ է եկել:

– Ի՞նչ թոռ, ա՛յ աղջկերք, ի՞նչ է պատահել:

Մեծ աղջիկը թե՝ բա չես ասիլ, ա՛յ մեր.

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըդակը պոպոզ,
Անունը Կիկոս...
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...

Վա՜յ, Կիկոս ջան,
Վա՜յ, որդի ջան...

– Վա՜յ, քոռանան քու տատի աչքերը, Կիկոս ջան,- մերն էլ ծնկանը զարկում է, նստում է աղջիկների կողքին, սկսում է նրանց հետ սուգ անել:

Մարդը տեսնում է՝ կնիկն էլ գնաց աղջիկների ետևից, ու սա էլ չեկավ: Ասում է՝ մի գնամ տեսնեմ՝ էս ինչ պատահեց, որ սրանք իրար ետևից գնացին, մնացին աղբրումը:

Վեր է կենում գնում:

Կնիկն ու աղջկերքը հենց սրա գլուխը հեռվից տեսնում են թե չէ, ձեն են տալի.

– Արի՛, արի՛, անբախտ պապի, արի տես՝ քու Կիկոսի գլուխն ինչ է եկել... Վա՜յ քու Կիկոսին...

– Ի՞նչ Կիկոս, ի՞նչ եք ասում:

Մեծ աղջիկը թե՝ բա չես ասիլ, այ հեր.

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըդակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՜յ, Կիկոս ջան,
Վա՜յ, որդի ջան...

– Վա՜յ, Կիկոս ջա՜ն,– ծնկներին տալիս են ու սուգ են անում մեր ու աղջկերք:

Սրանց միջի խելոքը հերն է լինում: Ասում է.

– Ա՛յ հիմարներ, ի՞նչ եք նստել էստեղ ու սուգ եք անում: Ինչ-

քան էլ սուգ անեք, ինչքան էլ լաց ըլեք, հո Կիկոսն էլ կենդանանալու չի: Վեր կացեք, եկեք գնանք մեր տունը, մարդ կանչենք, ժամ ու պատարագ անենք, Կիկոսի քելեխը տանք, լացով ինչ պետք է անենք: Աշխարհքի կարգ է, ինչպես եկել է, էնպես էլ պետք է գնա:

Դու մի՛ ասիլ՝ սրանց ունեցած-չունեցած չորսոտանին մի եզ է լինում, ունեցած փոշին էլ՝ մի քթոց ալյուր:

Գալիս են, էս եզը մորթում, էս մի քթոց ալյուրն էլ հաց թխում, ժողովուրդ են կանչում, ժամ ու պատարագ են անում, Կիկոսի քելեխն ուտեցնում, որ նոր հանգստանում են:

Չորս խուլերը

Վանքի վանահայրը մի օր ծառային ասում է...

– Մեր մառանում շատ մկներ են երևացել: Գնա մոտիկ գյուղը և մի կատու բեր:

Այդ ծառան մի քիչ խուլ է լինում: Գնում է գյուղ, տեսնում՝ մի աղջիկ երեխային օրոր է ասում: Մոտենում է նրան և ասում.

– Վանահայրը, չգիտեմ ինչու, պատվիրել է մի ճուտ բերել վանք:

Աղջիկը, որ նույնպես մի քիչ խուլ էր, գոռգոռում է...

– Ո՛չ մի դեպքում, ես իմ քույրիկին քեզ չեմ տա:

Եվ այս ասելիս նա բարկությամբ թափահարում է ձեռքերը:

Այդ ժամանակ վանքի ծառան էլ բարկանում է և գոռում...

– Մեղքի մեջ թաղվեցիր, աղջի՛կ: Ինչպե՞ս ես համարձակվում Աստծո ծառայի վրա գոռգոռալ:

Այս ասելով՝ հրում է աղջկան ու թողնում հետ գնում: Իսկ աղջիկը վազում է մոր մոտ ու ասում...

– Վանահայրը, չգիտես ինչու, պատվիրել է վանք տանել իմ քույրիկին:

Պարզվում է, որ սրա մայրն էլ մի քիչ խուլ է: Սա էլ շտապում է այգի, որտեղ իր խուլ մարդը ծառի տակ փռված թաղիքին նստած խաղում էր կատվի ձագի հետ:

– Պատրաստվիր ճամփա ընկնելու,– ասում է կինը,– վանահայրը, չգիտեմ ինչու, պատվիրել է վանք տանել մեր հորթը:

– Դե, ինչ կա, որ,– ասում է խուլ ամուսինը:– Փիսիկն է ուզում, թող փիսիկը լինի: Աստծո ծառային ես ոչինչ չեմ խնայի:

Այս ասելով՝ նա վերցնում է կատվի ձագը և գնում վանք: Վանահայրը տեսնում է, որ գյուղացին կատվի ձագ է բերել, իր վանականներին ասում է...

– Իմացեք, ոչ ոք իմ պատվերն այնպես լավ չի կատարում, ինչպես մեր խուլ ծառան:

Ծախած խրատը

Հին ժամանակ, երբ թագավորներն են իշխելիս եղել, ապրելիս է եղել մի շատ աղքատ մարդ, անունը՝ Վարոս: Վարոսը յոթ երեխա ուներ, կին և պառավ մայր: Տասն ուտող մի ընտանիքում միակ աշխատողը Վարոսն էր: Վարոսն օրնիբուն աշխատում էր, բայց անխիղճ մարդիկ չնչին վարձ էին տալիս, շատերն իսկի էդ էլ չէին տալիս:

Ծանր էր վիճակը: Ընդամենը մի կով ունեին, որը մի պուտ կաթ էր տալիս, էն էլ ո՞ր մեկի աչքին: Հակառակի պես՝ տարին առատ չէր: Հացը թանկացել էր, առաջն էլ ձմեռ էր՝ աղքատի մեծ թշնամին:

– Ա՛յ Վարոս,– ասաց կինը,– ի՞նչ ենք անելու, երեխեքը սովամահ են լինում, մենք էլ՝ հետները: Ձմեռն էլ աշխատանք չես ճարելու, ի՞նչ ես մտածում, այ սևասիրտ:

– Չգիտեմ, այ կնիկ, ես էլ չգիտեմ, մոլորվել եմ:

– Վարոս, ուրիշ ճար չունենք, արի կովը տար շուկա, ծախիր, ալյուր առ, բեր շփոթ անենք, ձմեռը յոլա գնանք, տեսնենք՝ հետո ինչ կլինի,– ասաց կինը:

– Այ կնիկ, էդ ի՞նչ ես ասում, էդ մի կովի հույսին ենք, էդ էլ որ ծախենք, բա հետո՞...

– Հասկանում եմ, Վարոս ջան, բայց կովն էլ շուտով կցամաքի, տանն էլ մի պտղունց ալյուր չունենք, ի՞նչ անենք, դե ասա:

– Ես էլ եմ հասկանում, այ կնիկ, բայց խելքս բան չի կտրում, բա առանց կով ի՞նչ կանենք:

– Դե որ խելքդ բան չի կտրում, այ Վարոս, ինձ ականջ արա, կովը տար ծախիր, ալյուր առ բեր, մին որ ձմեռնահան լինենք, հետո մի բան կմտածենք, Աստված ողորմած է:

Ուրիշ հնար չկար. Վարոսը կնոջ խորհրդով կովն առաջ է անում, տանում շուկա: Մեծ շուկա էր, ժողովուրդը՝ լիքը: Մինն առնում էր, մինը՝ ծախում, մինը տանում էր, մինը բերում, բայց ոչ մեկը չէր մոտենում Վարոսին, չէր էլ նայում կովին: Դե, ճիշտն ասած, ձմեռնամուտին ո՞վ կով կառնի, ձմեռը կեր կտա, կպահի, թե ինչ է՝ գարունը պիտի ծնի, որ կաթ տա: Չէ, ոչ ոք չի մոտենում:

Օրն անցնում է, արևը թեքվում, շուկան դատարկվում է, Վարոսը դեռ մոլորված կանգնել է: Էն է՝ ուզում է հետդարձի ճանապարհը բռնի, կովը հետ բերի տուն, մեկ էլ մի մարդ մոտենում և հարցնում է.

– Էդ կովը ծախում ե՞ս:

– Հրամանքդ, աղա ջան,– պատասխանում է Վարոսը,– ծախում եմ:

– Դե արի,– ասում է,– մի խրատ տամ, կովդ տուր ինձ ու գնա:

– Աղա ջան,– ասում է Վարոսը,– իմ տեղը նեղ է, դու ձե՞ռ ես առնում:

– Ձեռ չեմ առնում, այ մարդ, ճիշտ եմ ասում, մի լավ խրատ տամ, կովդ տուր ինձ ու գնա, չես փոշմանի:

– Այ տնածակ,– ասում է Վարոսը,– մի տուն լիքը երեխեք ունեմ, որ կրակը լցնես, վառես, շորահոտ չի գա, տանն էլ մի բուռ ալյուր չկա, որ շփոթ անենք, դու քո խրատով կովս առնում ես, խրատով երեխա կապրի՞, խրատը կուտվի՞, էդ ի՞նչ ես ասում:



– Ես քեզ լավություն եմ անում,– ասում է անծանոթը,– վնաս չես անի:

– Իսկ ինչ խրատ պետք է տաս, հետաքրքրվում է Վարոսը:

– Կովդ տուր, որ խրատը տամ,– պատասխանում է անծանոթը:

Վարոսի հետաքրքրությունը մեծանում է. տեսնես ինչ խրատ պետք է տա էս մարդը, որ մի կով արժենա:

– Լավ,– ասում է Վարոսը,– կովն առ, խրատը տուր:

Անծանոթը թոկը դնում է կովի պոզերին, մի կողմ է քաշում և ասում.

– Ով ինչ անի՝ իրեն կանի, էս է իմ խրատը,– ասում է անծանոթը և կովը քաշելով տանում է:

– Ա տնաքանդ, էդ է քո խրատը, տունս քանդեցիր, երեխանցս սոված թողի, էդ մի կովի հույսին էինք,– հետևից կանչում է Վարոսը, բայց խրատ տվողն արդեն ահագին հեռացել էր:– Կովս ետ տուր, չեմ ուզում քո խրատը:

– Էդ խելքով քանի՞ ախպեր եք,– հեռվից պատասխանում է,– և խրատը տամ, և կովը ետ տամ. չէ, ախպեր ջան, չի լինի: Գնա՛, վնաս չես անի:

Շփոթված Վարոսը դես-դեն է նայում, որ մեկին գտնի, օգնության կանչի, կովը ձեռքից առնեն. խրատ ծախողը գնում է, էլ չի երևում: Ձեռքը ծոցին, գլուխը կախ, գրպանը դատարկ, ծափ տալով գալիս է տուն:

Կինն առաջ է գալիս, դիմավորում, որ մի բան իմանա, բայց տեսնում է, որ Վարոսի հոնքերը կիտած են:

– Վարոս,– ասում է,– կովը ծախեցի՞ր:

– Ծախեցի,– ասում է,– կնիկ ջան, ծախեցի:

– Քանիսո՞վ ծախեցիր,– հարցնում է կինը:

– Մի խրատով,– պատասխանում է Վարոսը:

– Մի ինչո՞վ, չհասկացա,– նորից է հարցնում կինը:

– Մի խրատով, այ կնիկ, մի խրատով ծախեցի:

– Այ մարդ, հո չեմ գժվել, բան ասա՝ բան հասկանանք:

– Այ կնիկ,– հայերեն չեմ ասում,– բարկանում է Վարոսը,– մեր կովը տարա շուկա, մի մարդու վրա մի խրատով ծախեցի, հասկացա՞ր:

– Չէ, չեմ հասկանում, Վարոս, կամ դու ես գժվել, կամ ինձ ձեռ ես առնում:

– Ոչ ես եմ գժվել, ոչ էլ քեզ ձեռ եմ առնում, ես ճիշտն եմ ասում:

– Ա տնաքանդ,– բարկանում է կինը,– մենք սոված նստած ենք, դու կովը խրատով ես ծախե՞լ, խրատն ուտելու է՞, խելքդ հացի հետ ես կերե՞լ:

– Դե ես խրատով եմ ծախել, հիմի ինչ ուզում ես՝ արա:

– Էդ ի՞նչ խրատ է, որ մի կով արժի, մի ասա՝ տեսնեմ:

– Ի՞նչ ասեմ,– պատասխանում է Վարոսը,– էս խրատին ես մի կով եմ տվել, մի կով ու մի բան էլ ավել տուր, խրատն ասեմ:

Չէ, կինը տեսնում է, որ բան չի դուրս գա: Մտածում է, որ կամ կովը խլել են ավազակները, կամ թե չէ՝ Վարոսին մի բան է պատահել, չի ուզում ասի: Որոշում է գնալ թագավորին գանգատ անել, գուցե թագավորը խղճա, կամ ավազակներից ետ խլի կովը, եթե իսկապես նրանք են խլել, իսկ թե չէ՝ գոնե Վարոսից կիմանա, թե ինչ է արել կովը: Գնում է ուղիղ թագավորի մոտ:

– Թագավորն ապրած կենա,– ասում է,– յոթ խմորակեր երեխա ունեմ, մի էլ պառավ կեսուր: Մի կով ունեինք, դրա հույսով էինք ապրում: Մարդս տարավ, որ կովը ծախի, ալյուր առնենք, որ ձմեռը սովամահ չլինենք, էն էլ տարել, խրատով է ծախել, դատարկաձեռն տուն է եկել:

– Ինչով է ծախե՞լ,– հարցնում է թագավորը,– խրատով է ծախե՞լ:

– Հա,– ասում է,– թագավորն ապրած կենա, խրատով է ծախել:

– Ի՞նչ խրատով է ծախել,— հետաքրքրվում է թագավորը:

– Ինձ չի ասում, թե ինչ խրատով է ծախել,– պատասխանում է կինը:

– Դե գնա, մարդուդ ուղարկիր, թող գա,– ասում է թագավորը,– քեզնից, քո ասածներից բան չեմ հասկանում:

Կինը գալիս է տուն, Վարոսին ասում է.

– Գնա, թագավորը քեզ կանչում է:

– Թագավորն ինձ հետ ի՞նչ գործ ունի,– զարմանում է Վարոսը:

– Գործ ունի թե չէ՝ չգիտեմ,– ասում է կինը,– բայց կանչում է, գնա:

Վարոսը վեր է կենում, գնում թագավորի մոտ:

– Թագավորն ապրած կենա,– հարցնում է Վարոսը,– ինձ կանչե՞լ ես:

– Այ տղա, էդ դռ՞ւ ես կովը խրատով ծախել,– հարցնում է թագավորը:

– Ես եմ,– ասում է,– թագավորն ապրած կենա, ի՞նչ կա որ:

– Իսկ ի՞նչ խրատ են տվել, որ կովդ տվել ես,– հարցնում է թագավորը:

– Թագավորն ապրած կենա,– պատասխանում է Վարոսը,– ես էդ խրատին մի կով եմ տվել, հիմի խրատը քեզ ձրի տամ: Երկու կովի գին տուր, խրատը քեզ վրա ծախեմ:

Թագավորի ծիծաղը գալիս է:

– Անունդ ի՞նչ է,– հարցնում է:

– Վարոս է, թագավորն ապրած կենա:

– Վարո՛ս, բա էդ ո՞նց կլինի,– ծիծաղելով հարցնում է թագավորը,– դու խրատին մի կով ես տվել, ինձ վրա երկու կովի գնով ես ծախում:

– Բա որ առևտրում օգուտ չլինի, էլ ի՞նչ առևտուր,– պատասխանում է Վարոսը:

Թագավորը շատ է ուզում իմանալ, թե էդ ի՞նչ խրատ է, որ Վարոսը մի կով է տվել դրա դիմաց: Երկու կովի արժեքը մեծ բան չի թագավորի համար, որոշում է երկու բուռ ոսկի տալ և խրատն առնել:

– Բերեք,– ասում է,– երկու բուռ ոսկի տվեք էս մարդուն:

Թագավորի ծառաները գնում, երկու բուռ ոսկի են բերում, տալիս են Վարոսին: Վարոսն ականջներին չի հավատում, թե երկու բուռ ոսկի կտան իրեն, բայց երբ ոսկին բերում են, ուրախությունից քիչ է մնում դուրս թռչի: Էդքան ոսկով երկու կով չէ, տասը կով էլ կառնի: Շփոթված կանգնել է, հիմա էլ աչքերին չի հավատում:

– Դե, ի՞նչ ես կանգնել,– դիմում է թագավորը,– խրատդ ասա է՛:

Վարոսն ուշքի է գալիս և ասում.

– Թագավորն ապրած կենա, «ով ինչ անի՝ իրեն կանի», էս է էն խրատը, որին մի կով եմ տվել:

Թագավորը նորից ծիծաղում է, ծիծաղում են նաև պալատականները:

– Էդ խրատի՞ն ես մի կով տվել,– ծիծաղելով հարցնում է թագավորը:

– Ծիծաղելու բան չի, թագավորն ապրած կենա,– ասում է Վարոսը, ծախողն ասաց, որ առնողը չի փոշմանի:

– Դե լա՛վ,– ասում է թագավորը,– մեծ ընտանիք ես պահում, տար էդ ոսկին, քո ընտանիքը պահիր, թող խաբվածը ես լինեմ:

Վարոսն ուրախ գալիս է իր տուն: Կինը, որ լացից աչքերը դեռ թաց էին, տեսնում է ուրախ Վարոսին և զարմացած հարցնում.

– Հը, այ խիղճդ մեռած Վարոս, թագավորն ի՞նչ ասաց:

– Աշխեն ջան,– պատասխանում է Վարոսը,– թագավորը խրատն ինձանից առավ, ոսկի՛ տվեց, ոսկի՛...

Աշխենն էլ իր հերթին ականջներին չի հավատում, բայց հարցնում է.

– Ինչքա՞ն ոսկի տվեց քո խրատին, այ խելքի տոպրակ:

– Երկու բուռ ոսկի, Աշխեն ջան, երկու բուռ ոսկի...

Վարոսը երկու բուռ ոսկին գրպանից հանում, լցնում է Աշխենի առաջ: Կինը ուրախությունից փայլում է, փաթաթվում է Վարոսի վզով:

– Վա՛յ, Վարոս ջան, խելքո՛վ Վարոս ջան,– ասում է կինը:

– Առավոտը հետս կռիվ էիր անում, չէ՞,– ասում է Վարոսը,– իսկ հիմի՝ «Վա՛յ, Վարոս ջան, խելքով Վարոս ջան» եմ դառել:

– Մի նեղանա, Վարոս ջան, մի նեղանա,– փաղաքշում է կինը:

Հաջորդ օրը Վարոսը երկու կով է առնում, երեխեքի համար ուտելիք է առնում, բերում տունը լցնում:

Սոված երեխաները կուշտ հաց են ուտում, լիանում:

Բոլորն իմանում են, որ Վարոսը կովը խրատով է ծախել, խրատն էլ թագավորի վրա ծախել ու հարստացել է, բայց թե ի՞նչ խրատ էր դա՝ ոչ ոք չի իմանում, անգամ՝ կինը:

Հիմա գանք տեսնենք, թե ինչ պատահեց խրատն առնող թագավորի հետ:

Թագավորը, որ մի զվարճասեր մարդ էր, երկար ժամանակ հիշում է, քթի տակ կրկնում է նրա գնած խրատը՝ «Ով ինչ անի՝ իրեն կանի»...

Մի օր էլ, ամեն օրվա պես, գնում է իր վարսավիրի մոտ՝ սափրվելու: Վարսավիրը սովորականից ավելի երկար է սրում ածելին: Թագավորը նայում է ածելուն և քթի տակ կրկնում է Վարոսի խրատը:

– Ով ինչ անի՝ իրեն կանի, ով ինչ անի՝ իրեն կանի...

Էս ասելուն պես վարսավիրը դադարում է սրելը, ձեռքերը սկսում են դողդողալ, գույնը թռնում է, մեռելի գույն է առնում, փռվում է թագավորի ոտքերի առաջ:

– Ողորմա ինձ, թագավորն ապրած կենա, ես չեմ մեղավոր, մեղավորը նրանք են, նրանք... Ահա էսքան ոսկին զոռով տվին, թե՝ թագավորի վիզը պիտի կտրես, թե չէ՝ քո վիզն ենք կտրելու...

Թագավորն էս որ լսում է՝ ընդոստ ոտքի է կանգնում, հրամայում է ձերբակալել դավադիրներին և բոլորին գլխատել է տալիս...

Դավադիրները պատժվում են: Թագավորը նորից հիշում է Վարոսին ու նրա խրատը, բայց այս անգամ չի ծիծաղում:

Մարդ է ուղարկում, Վարոսին կանչել է տալիս պալատ.

– Եղբայր Վարոս,– ասում է,– քեզանից գնած խրատն իմ կյանքը փրկեց: Ես քեզ եմ պարտական, որ հիմա ապրում եմ: Սրանից հետո դու կլինես իմ ամենամոտիկ ու վստահելի մարդը...

Թագավորի նոր հագուստը

Շատ ու շատ տարիներ առաջ կար մի թագավոր: Նա այնքան շատ է սիրում նոր, գեղեցիկ հագուստ հագնել, որ իր ամբողջ փողը դրա վրա էր ծախսում: Նա չէր հետաքրքրվում իր զորքով, չէր սիրում թատրոն կամ զբոսանքի գնալ: Եվ եթե զորահանդեսի էր դուրս գալիս, թատրոն էր գնում կամ զբոսանքի, ապա միայն նրա համար, որ մարդկանց ցույց տար իր նոր հագուստը: Օրվա ամեն մի ժամի համար նա առանձին շոր ուներ, և եթե մյուս թագավորների մասին հաճախ ասում են. «Թագավորը խորհրդի է նստած», սրա մասին ասում էին. «Թագավորը հանդերձարանում է»:

Այն մեծ քաղաքում, որտեղ ապրում էր այդ թագավորը, ժամանակը շատ ուրախ էր անցնում, և ամեն օր օտարականներ էին գալիս:

Մի անգամ էլ այդ քաղաք եկան երկու խաբեբա: Նրանք ձևացրին, թե իրենք ջուլհակ են, և հավատացնում էին, թե կարող են գործել այնպիսի հրաշալի կտոր, ինչպիսին ոչ ոք աշխարհում չի

տեսել: Նրանք ասացին, թե իրենց գործած կտորը ոչ միայն գեղեցիկ գույներ ու նախշեր կունենա, այլև այն մարդը, որ հիմար է կամ իր պաշտոնին հարմար չէ, այդ կտորից կարված շորը չի տեսնի:

«Ա՛յ քեզ հրաշալի հագուստ,– մտածեց թագավորը, երբ լսեց այս լուրը:– Եթե ես այդ հագուստը հագնեմ, կիմանամ, թե իմ հպատակներից որը հարմար չէ իր պաշտոնին, բացի դրանից, հիմարներին կտարբերեմ խելոքներից: Հարկավոր է, որ այդ վարպետներն իսկույն սկսեն այդպիսի կտոր գործել ինձ համար»:

Եվ նա խաբեբաներին հենց սկզբից շատ փող տվեց, որպեսզի նրանք իսկույն աշխատանքն սկսեն:

Խաբեբաները ջուլհակի երկու դազգահ դրեցին և սկսեցին ձևացնել, թե աշխատում են, թեև դազգահների վրա ոչինչ չկար: Նրանք հաճախ պահանջում էին ամենանուրբ ոսկե թել, բայց երբ ստանում էին, իսկույն թաքցնում էին իրենց գրպաններում և շարունակում էին աշխատել դատարկ դազգահների վրա, և այդպես՝ առավոտից մինչև ուշ գիշեր:

«Շատ կուզենայի իմանալ, թե ինչքան կտոր են գործել»,– մտածեց թագավորը, բայց նրան վախեցնում էր այն միտքը, որ ով հիմար է կամ իր պաշտոնին անհամապատասխան, կտորը չի տեսնի: Իհարկե, իմ մասին անհանգստանալու կարիք չկա,– մտածում էր նա,– բայց և այնպես, ավելի լավ չի՞ լինի նախ մի ուրիշին ուղարկել ջուլհակների աշխատանքը տեսնելու»: Քաղաքում արդեն բոլորը գիտեին, թե ինչ հատկություն է ունենալու նոր կտորը, և բոլորն էլ շտապում են շուտ իմանալ, թե որքան է հիմար կամ պաշտոնին անհամապատասխան իրենց հարևանը:

«Արի ջուլհակների մոտ ուղարկեմ իմ ծերունի, ազնիվ նախարարին,– մտածեց թագավորը,– նա բոլորից լավ գիտի կտորի լավն ու վատը: Եվ խելոք մարդ է, և՛ իր պաշտոնին համապատասխան»:

Եվ ահա հարգարժան ծերունի նախարարը մտավ այն դահլիճը, որտեղ դատարկ դազգահների առաջ նստել էին խաբեբաները, նայեց դազգահներին և աչքերը չռեց: «Ողորմած Աստված,– մտածեց նա,– ես ոչինչ չեմ տեսնում, ո՛չ մի կտոր»: Բայց նա դրա մասին ոչինչ չասաց:

Երկու խաբեբաները նրան խնդրեցին մոտենալ և ուշի-ուշով դիտել կտորի նախշերն ու գույները: Եվ սկսեցին մատներով ցույց տալ դատարկ տարածությունը: Խեղճ ծերունին շարունակում էր աչքերը չռել, բայց ոչ մի կտոր չէր տեսնում, որովհետև ոչինչ էլ չկար, որ տեսներ:

«Տեր Աստված,– մտածեց նախարարը,– մի՞թե ես հիմար եմ: Երբեք այդպիսի բան իմ մտքով չի անցել: Բայց ոչ ոք պետք է չիմանա դա: Կամ գուցե ես իմ պաշտոնին համապատասխան չե՞մ: Չէ՛, չի կարելի խոստովանել, թե ես կտորը չեմ տեսնում»:

– Դե, հավանո՞ւմ եք,– հարցրեց ջուլհակներից մեկը:

– Օ՜, սքանչելի կտոր է, զարմանալի լավը,– ասաց ծերունին՝ ակնոցի միջից հայացքը հառելով դատարկ տարածությանը:– Ինչ նախշեր են, ինչ գույներ: Ես թագավորին կհաղորդեմ, որ կտորը ինձ շատ ու շատ դուր եկավ:

– Շատ հաճելի է լսել,– ասացին երկու ջուլհակները և սկսեցին մանրամասն նկարագրել գույներն ու նախշերը: Ծերունի նախարարը ուշադիր լսում էր, որպեսզի հետո ճշտորեն հաղորդի թագավորին:

Խաբեբաները նորից փող, մետաքս ու ոսկի պահանջեցին, որ գործելը շարունակեն: Բայց այդ ամենը նրանք լցնում էին իրենց սեփական գրպանը, իսկ դազգահների վրա ոչ մի թել չէր երևում, նրանք առաջվա պես շարունակում էին գործել դատարկ դազգահներով:

Քիչ անց թագավորն ուղարկեց մի ուրիշ պատվարժան պաշտոնյայի, որպեսզի իմանա, թե ինչպես է ընթանում գործը, և

արդյոք շո՞ւտ պատրաստ կլինի կտորը: Բայց նրան էլ պատահեց նույնը, ինչ նախարարին: Նա նայում էր, նայում և ոչինչ չէր տեսնում, բացի դատարկ դազգահներից:

– Դե՛, ինքներդ ասեք, սքանչելի չէ՞ այս կտորը,– ասացին խաբեբաները և սկսեցին մատներով ցույց տալ ու գովաբանել գոյություն չունեցող կտորի նախշերը:

«Ես հիմար մարդ չեմ,– մտածեց պաշտոնյան,– բայց, եթե այսպես է, նշանակում է՝ ես անպետք եմ իմ պաշտոնի համար: Այ քեզ բա՜ն: Բայց ես պետք է ցույց չտամ, թե ինքս այդ գիտեմ»:– Եվ նա սկսեց գովաբանել այդ կտորը՝ առանց տեսնելու, և հավատացնել, թե ինքն ուղղակի իրեն երջանիկ է զգում, երբ նայում է այդ սքանչելի գույներին ու հրաշալի նախշերին:

– Սքանչելի՜ կտոր է,– նա էլ այդպես ասաց թագավորին:

Քաղաքում բոլորը խոսում էին հենց միայն այդ հիասքանչ կտորի մասին:

Եվ ահա ինքը՝ թագավորն էլ ցանկացավ տեսնել կտորը, քանի դեռ դազգահների վրա էր: Ընտրյալ պալատականների մի ամբողջ շքախմբով, որոնց մեջ էին նաև այն երկու հարգարժան ծերունի պաշտոնյաները, թագավորը գնաց խորամանկ խաբեբաների մոտ: Իսկ նրանք գործում էին ամբողջ եռանդով ու թափով, բայց՝ առանց թելի:

– Դե՛, նայեք, սքանչելի կտոր չէ՞,– ասացին երկու հարգարժան պաշտոնյաները, որոնք արդեն եղել էին այստեղ:– Ձերդ մեծությունը չի՞ բարեհաճի նայել գույներին ու նախշերին:– Եվ նրանք ցույց էին տալիս դատարկ դազգահը, որովհետև հավատացած էին, թե բոլոր ներկաներն այնտեղ կտոր են տեսնում:

«Այս ի՞նչ բան է,– մտածեց թագավորը:– Ես ոչի՛նչ չեմ տեսնում: Ի՜նչ սարսափելի բան: Նշանակում է ես հիմա՞ր եմ կամ թե անպետք թագավո՞ր եմ: Դա ամենավատը կլիներ»: Բայց բարձրաձայն ասաց.

– Օ՜, շատ ու շատ սիրուն է: Այդպիսի վարպետությունը մեծ գովասանքի է արժանի:

Եվ նա սկսեց գոհունակ ժպիտով գլուխը շարժել՝ ձևացնելով, թե հիանում է կտորով: Նա չէր ուզում խոստովանել, որ ոչինչ չի տեսնում: Նրա շքախումբը աչքերը չռած նայում էր դազգահներին և նույնպես ոչինչ չէր տեսնում, բայց բոլորն էլ կրկնում էին, թե հրաշալի կտոր է և թագավորին խորհուրդ էին տալիս այդ նոր սքանչելի կտորից իր համար շոր կարել առաջիկա հանդիսավոր երթի համար:

– Օ՜, ինչ սքանչելի է, ինչ շքեղ, ինչ նրբագեղ,– լսվում էր ամեն կողմից, և բոլորն էլ լիակատար գոհունակություն էին հայտնում:

Թագավորը խաբեբաներին շքանշաններ պարգևեց, որ կպցնեն իրենց կրծքներին և նրանց պալատական ջուլհակի կոչում շնորհեց:

Հանդեսի նախօրյակին ամբողջ գիշեր խաբեբաները չպառկեցին քնելու, աշխատում էին տասնվեց մոմի լույսի տակ: Հարկավոր էր ժողովրդին ցույց տալ, թե իրենք զբաղված են թագավորի նոր հագուստը պատրաստելով: Նրանք ձևացնում էին, թե ահա կտորը ցած բերին դազգահներից, օդի մեջ կտրում էին մեծ-մեծ մկրատներով, կարում էին անթել ասեղով և վերջապես ասացին.

– Դե, ահա, հագուստը պատրաստ է:

Թագավորն իր ամենաանվանի պալատականների հետ եկավ նրանց մոտ՝ հագնվելու, և երկու խաբեբաներն էլ մի-մի ձեռքը վեր բարձրացրին, կարծես թե մի բան են վեր բարձրացնում, ու ասացին.

– Ահա՛ վարտիքը: Ահա՛ կամզոլը: Ահա՛ պատմուճանը: Բոլորն էլ թեթև, ինչպես ոստայն: Մարդուն այնպես կթվա, թե հագին ոչինչ չկա: Բայց հենց այդ է ամբողջ հրաշալիքը:

– Ճիշտ է,– միաբերան ասացին բոլոր պալատականները, թեև

ոչինչ չէին տեսնում, որովհետև տեսնելու բան էլ չկար:

– Այժմ թող Ձերդ մեծությունը բարեհաճի հանել իր հին հագուստը,– ասացին խաբեբաները,– մենք, ահա այս մեծ հայելու առաջ Ձեզ կհագցնենք նոր հագուստը:

Թագավորը հանեց իր բոլոր շորերը, իսկ խաբեբաներն այնպես ձևացրին, թե նրան են մատուցում նոր կարված հագուստի յուրաքանչյուր մասն առանձին, ապա իբր թե ամրացրին քղանցքի տուտը, իսկ թագավորը շուռումուռ էր գալիս հայելու առաջ, իբրև թե տեսնում էր իր հագուստը:

– Տեր Աստված, ինչպես սազում է Ձեզ, ինչքան լավ է նստում,– ասում էին բոլորը:– Ինչ նախշեր, ինչ գույներ, ինչ շքեղ հագուստ է:

– Ցածում Ձերդ մեծությանն սպասում է ամպհովանին, որ Ձեր գլխավերևը բռնած պիտի տանեն շքերթի ժամանակ,– ասաց գլխավոր արարողապետը:

– Ես պատրաստ եմ,– ասաց թագավորը:– Լավ է նստում, չէ՞:

Եվ նա մի անգամ էլ շուռումուռ եկավ հայելու առաջ: Դրանով նա ուզում էր ցույց տալ, թե մի անգամ էլ լավ դիտում է իր նոր հագուստը:

Այն սենեկապետները, որոնք պետք է բռնեին նրա փեշը, սկսեցին ձեռքերով բռնել օդը, իբր թե թագավորի փեշն են բարձրացնում հատակից, իսկ թագավորի հետևից գնալիս ձեռքերը ցած չէին թողնում՝ չուզենալով ցույց տալ, որ ոչինչ չեն տեսնում:

Եվ ահա թագավորն առաջ էր քայլում ամպհովանու տակ, և փողոցներում ու լուսամուտների մոտ հավաքված բոլոր մարդիկ ասում էին.

– Տեր Աստված, ինչ աննման բան է թագավորի այս նոր հագուստը: Ինչ սքանչելի քղանցք ունի նրա պատմուճանը: Ինչ հիանալի է նստում հագուստը:

Ոչ ոք չէր ուզում մյուսի մոտ խոստովանել, որ ինքը ոչինչ չի

տեսնում, թե չէ կմտածեին, որ նա անպետք է իր պաշտոնի համար կամ թե չափազանց հիմար է: Թագավորի հագուստներից ոչ մեկն այդպիսի հաջողություն չէր ունեցել:

– Բայց, ախր, նա մե՛րկ է,– հանկարծ բացականչեց մի երեխա:

– Աստվա՛ծ իմ, լսե՛ք, թե ինչ է ասում այս անմեղ երեխան,– ասաց նրա հայրը: Եվ բոլորն էլ սկսեցին շշուկով իրար հաղորդել այն, ինչ ասել էր երեխան:

– Թագավորը մե՛րկ է: Երեխան ասում է, որ նրա հագին ոչինչ չկա:

– Նրա հագին ոչինչ չկա՛,– վերջապես գոռաց ամբողջ ժողովուրդը:

Եվ թագավորը ցնցվեց, որովհետև նրան թվում էր, որ մարդիկ ճիշտ են ասում: Բայց և այնպես որոշեց արարողությունը մինչև վերջ հասցնել: Եվ նա ավելի հպարտ դիրք ընդունեց, իսկ սենեկապետները քայլում էին նրա հետևից, քայլում էին՝ ձևացնելով, թե բռնել են թագավորի հագուստի քղանցքը, թեև իրականում ոչ մի քղանցք էլ գոյություն չուներ:

Մի աչքանին ու երկու աչքանին

Մի կղզում ապրում էր Սեկի անունով մի ծույլ մարդ: Առավոտից մինչև իրիկուն նա պառկում էր քրքրված խսիրի վրա և ինչ-որ փնթփնթացնում:

- Ինչո՞ւ ես փնթփնթում, Սեկի՛,- ամոթանք են տալիս նրան մարդիկ: Ավելի լավ չէ՞ մի գործով զբաղվես:

Սեկին պատասխանում է.

- Ամբողջ օրերով աղոթք եմ անում, աղաչում եմ աստվածներին, որ ինձ ազատեն աղքատությունից: Երբ աստվածները լսեն իմ աղոթքները, նրանք անմիջապես ինձ երջանկություն կպարգևեն:

Եվ ահա մի անգամ Սեկին իմանում է, որ հարևան կղզում ապրում են միաչքանի մարդիկ: Ուրախանում է ծույլը:

- Աստվածները լսել են իմ աղոթքները: Նրանք ինձ երջանկություն են ուղարկել: Ես հենց հիմա կուղևորվեմ կղզի՝ միաչքանիների մոտ, կխաբեմ որևէ միաչքանի այլանդակի և կբերեմ այստեղ:

Հարևանները զարմանում են.

- Իսկ ինչիդ է հարկավոր այդպիսի մարդը:

- Ես նրան կդնեմ վանդակի մեջ և ցույց տալով մարդկանց՝ փող կհավաքեմ: Շատերը կցանկանան դիտել այդպիսի այլանդակին:

Ծույլը նստում է նավակ և ուղևորվում դեպի հարևան կղզին:

Հենց որ Սեկին մոտենում է ափին, նա անմիջապես տեսնում է այն, ինչ փնտրում էր. նրան դեմ հանդիման քայլում է միաչքանի այլանդակը:

«Օ՜, ինչ երջանկություն, իմ հարստությունը ինքն է գալիս ինձ մոտ»,- ուրախանում է Սեկին: Խորամանկ ծույլիկը մեջքից ծալվելով գլուխ է տալիս միաչքանուն և կեղծ ժպիտով ասում.

- Տարիներ շարունակ ես երազել եմ հանդիպել այնպիսի մի հաճելի մարդու, ինչպիսին Դուք եք:

Միաչքանին ուշադրությամբ նայում է Սեկիին իր միակ աչքով և հարգալից ասում.

- Ես էլ եմ երազել ամբողջ կյանքում հանդիպել այնպիսի մի հաճելի մարդու, ինչպիսին Դուք եք:

Այդ ժամանակ նենգամիտ ծույլն ասում է.

- Աղաչում եմ Ձեզ,- այցելեք իմ տունը: Եկեք շտապ նավակ նստենք և ուղևորվենք ինձ մոտ:

Միաչքանին պատասխանում է.

- Շնորհակալաբար ընդունում եմ Ձեր սիրալիր հրավերը: Բայց նախապես աղաչում եմ Ձեզ, պատիվ արեք հյուր լինել ինձ մոտ, իմ հարազատները երջանիկ կլինեն ծանոթանալու Ձեզ հետ:

- Ուրախությամբ ոտք կդնեմ ձեր տան շեմին,- ասում է Սեկին և ինքն իրեն մտածում: «Վաղը դու նստած կլինես վանդակում, և բոլոր կողմերից իմ գրպանը արծաթե դրամներ կթափվեն»:

Հազիվ է Սեկին մտնում միաչքանու տունը, երբ նրան բոլոր կողմերից շրջապատում են տանտիրոջ եղբայրները և սկսում իրար ընդհատելով գոռգոռալ.

- Նայեցեք, նա երկու աչք ունի: Ահա թե ինչպիսի այլանդակն է սա: Եվ որտեղի՞ց հայտնվեց:

- Հիմա կասեմ, միայն թե նրան ավելի ամուր կապեք,- հրամայում է տանտերը:

Եվ Սեկին դեռ աչքը չթարթած՝ այն է տեսնում, որ կապված է:

Այդ ժամանակ միաչքանին եղբայրներին ասում է.

- Ուրախացեք: Մեր աղքատության վերջը հասել է: Մենք այս ճիվաղին կդնենք վանդակի մեջ և փողոցով ման տալով՝ ցույց կտանք մարդկանց: Շատերը կցանկանան նայել երկուաչքանի մարդուն:

Մի ժամ չանցած՝ Սեկին արդեն նստած է լինում վանդակում: Կղզու միաչքանի բնակիչները ամեն կողմից շտապում են տեսնել երկու աչքով մարդուն: Դրա համար յուրաքանչյուրը մի արծաթ դրամ է տալիս տիրոջը:

Այսպես է իր օրերն ավարտում ծույլ Սեկին:

Ահա թե երբեմն ինչ է սպասում նրան, ով փորձանք է պատրաստում ուրիշի համար:

Անխելք մարդը

Ժամանակով մի աղքատ մարդ կար. որքան աշխատում էր, որքան չարչարվում էր, դարձյալ նույն աղքատն էր մնում:

Հուսահատված՝ մի օր նա վեր կացավ, թե՝ պետք է գնամ գտնեմ Աստծուն, տեսնեմ՝ ես ե՞րբ պետք է պրծնեմ այս աղքատությունից ու ինձ համար մի բան խնդրեմ:

Ճանապարհին մի գայլ պատահեց:

– Առա՛ջ բարի, մարդ ախպեր, ո՞ւր ես գնում,– հարցրեց գայլը:

– Գնում եմ Աստծու մոտ,– պատասխանեց աղքատը,– դարդ ունեմ ասելու:

– Դե որ գնաս աստծու մոտ,– խնդրեց գայլը,– ասա՝ մի սոված գայլ կա, գիշեր–ցերեկ ման է գալիս սարուձոր, ուտելու բան չի գտնում, ասա՝ մինչև ե՞րբ պետք է սոված մնա. որ ստեղծել ես՝ ինչո՞ւ չես կերակուր հասցնում:

– Լա՛վ,– ասաց մարդն ու շարունակեց ճանապարհը:

Շատ գնաց թե քիչ, պատահեց մի սիրուն աղջկա:

– Ո՞ւր ես գնում, ախպե՛ր,– հարցրեց աղջիկը:– Գնում եմ Աստծու մոտ:

– Երբ որ Աստծուն տեսնես,– աղաչեց սիրուն աղջիկը,– ասա՝ այսպիսի մի աղջիկ կա՝ ջահել, առողջ, հարուստ, բայց չի կարողանում ուրախանալ, բախտավոր զգալ իրան, ի՞նչ պիտի լինի նրա ճարը:

– Կասեմ,– խոստացավ ճամփորդն ու գնաց, պատահեց մի ծառի, որ թեև ջրափին էր կանգնած, բայց չոր էր:

– Ո՞ւր ես գնում, ա՛յ ճամփորդ,– հարցրեց չոր ծառը:

– Գնում եմ Աստծու մոտ:

– Դե կանգնի՛ր, մի երկու խոսք էլ ես ապսպրեմ,– խնդրեց չոր ծառը,– Աստծուն կասես՝ այս ի՞նչ բան է. բուսել եմ այս պարզ ջրի ափին, բայց ամառ-ձմեռ չոր եմ մնում, ե՞րբ պետք է ես էլ կանաչեմ:

Այս էլ լսեց աղքատն ու շարունակեց ճանապարհը: Այնքան գնաց, մինչև գտավ Աստծուն: Մի բարձր ժայռի տակ, մեջքը ժայռին դեմ տված, ալևոր մարդու կերպարանքով նստած էր աստվածը:

– Բարի օր,– ասաց աղքատն ու կանգնեց Աստծու առաջին:

– Բարով եկար,– պատասխանեց Աստված,– ի՞նչ ես ուզում:

– Էն եմ ուզում, որ ամեն մարդի էլ հավասար աչքով մտիկ անես, մեկին ավար չանես, մյուսին՝ խավար. ես այնքան տանջվում, աշխատում եմ, էլ չեմ կարողանում կուշտ փորով հաց գտնեմ, իսկ շատերը, որ իմ կեսի չափ էլ չեն աշխատում, հարուստ ու հանգիստ ապրում են:

– Դե գնա, հիմի կհարստանաս, քո բախտը տվեցի, գնա վայելի՛ր,– ասաց Աստված:

– Էլ բան ունեմ ասելու, տե՛ր,– ասաց աղքատն ու պատմեց սոված գայլի, սիրուն աղջկա ու չոր ծառի ապսպրանքը:

Աստված բոլորի պատասխանը տվեց, և աղքատը շնորհակալություն արավ ու հեռացավ:

Վերադարձին պատահեց չոր ծառին:

– Ինձ համար ի՞նչ ասաց Աստված,– հարցրեց չոր ծառը:

– Ասաց՝ քո տակին ոսկի կա. մինչև այդ ոսկին չհանեն, որ արմատներդ հողին հասնեն, դու չես կանաչիլ,– պատմեց մարդը:

– Էլ ո՞ւր ես գնում, արի՛ ոսկին հանիր էլի, հա՛մ քեզ օգուտ կլինի, հա՛մ ինձ, դու կհարստանաս, ես էլ կկանաչեմ:

– Չէ՛, ես ժամանակ չունեմ, շտապում եմ,– պատասխանեց աղքատը,– Աստված ինձ բախտ տվեց, ես շուտով պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ,– ասաց ու գնաց:

Հետո սիրուն աղջիկը պատահեց ու ճամփորդի առաջը կտրեց.

– Ի՞նչ լուր բերիր ինձ համար:

– Աստված ասաց՝ դու պիտի քեզ համար մի մտերիմ կյանքի ընկեր գտնես, այն ժամանակ էլ տխուր չես լինիլ, ուրախ ու երջանիկ կլինես:

– Դե որ այդպես է, արի՛, դու եղիր իմ կյանքի մտերիմ ընկերը,– թախանձեց աղջիկը ճամփորդին:

– Չէ՛, ես քեզ ընկերակցելու ժամանակ չունեմ, Աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ,– ասաց աղքատն ու հեռացավ:

Ճանապարհին սպասում էր սոված գայլը, հեռվից հենց որ տեսավ ճամփորդին, վազեց, առաջը կտրեց:

– Հը՛, Աստված ի՞նչ ասաց:

– Ախպեր, Աստծու մոտ գնալիս քեզանից հետո մի սիրուն աղջիկ ու մի չոր ծառ էլ պատահեցին, աղջիկն ապսպրեց, թե ինչո՞ւ ինքը չի կարողանում ուրախանալ, ծառն էլ թե՝ ինչո՞ւ է գարունամառ չոր: Աստծուն պատմեցի, ասաց. «Աղջկանն ասա՝ իրան համար մի կյանքի ընկեր գտնի՝ կբախտավորվի, ծառին էլ ասա՝ քո տակին ոսկի կա, պետք է այդ ոսկին հանեն, արմատներդ հողին հասնեն, որ կանաչես»: Եկա իրանց պատմեցի Աստծու խոսքերը: Ծառն ասաց՝ դե արի, հանիր, ոսկին տար, աղջիկն էլ

թե՝ ես հենց քեզ եմ ընտրում ինձ ընկեր: Ասացի. «Չէ՛, ախպեր, չեմ կարող, Աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ»:

– Իսկ ինձ համար ի՞նչ ասաց Աստված,– հարցրեց սոված գայլը:

– Քեզ համար էլ ասաց՝ սոված ման կգաս, մինչև մի անխելք մարդ կգտնես, կուտես, կկշտանաս:

– Էլ քեզանից անխելք մարդ որտեղ գտնեմ, որ ուտեմ,– ասաց գայլն ու կերավ անխելք աղքատին:

Սիսեռակեր հարսը

Սկեսուրը մի տոպրակ սիսեռ է դնում պահարանի գլխին: Նորահարսը սիսեռ շատ էր սիրում, օրական իր ուզածի չափ գողանում, ուտում է: Սկեսուրը տեսնում է, որ օրեցօր սիսեռի տոպրակը դատարկվում է: Գողն ո՞վ է՝ չգիտի: Հարսի վրա կասկածի՝ այդպես էլ չի լինի:

- Նոր հարսը սիսեռ կգողանա՞, - ասում է:

Հարս դու հարս... որպեսզի իրեն չկասկածեն, մի օր թախտի տակն ավելիս հատակի ճեղքի մեջ սիսեռի հատիկ է գտնում, տանում, ցույց է տալիս սկեսուրին:

- Սկեսո՛ւր ջան, - ասում է, - սա ի՞նչ է:

Սկեսուրն իր մտքում ասում է. «Վու՜յ, քոռանամ ես, քիչ մնաց հարսիս սիսեռի գող ասեի: Իմ խեղճ, անլեզու հարսը սիսեռն ինչ է՝ չգիտի»:

Էդ օրվանից, երբ մեկը մի բան թաքուն վերցնում ուտում է կամ թաքուն բան է անում ու չքմեղանում, ասում են.

- Սիսեռակեր հարսն է... ոչ մի բանից տեղյակ չէ...

Ամենասիրուն ճագը

Ասում են՝ մի անգամ թռչունների թագավորը՝ բազեն, կանչում է ագռավին, հանձնարարում.

- Գնա՛, աշխարհը մա՛ն եկ, ամենասիրուն թռչունի ճուտը բե՛ր, տեսնեմ՝ ճուտն ի՞նչ է մոր պես սիրուն լինում, թե՞ չէ:

Ագռավը գնում է, դե՛ս է ման գալիս, դե՛ն է ման գալիս, վերջը՝ իր ճագին վերցնում, գալիս է բազեի մոտ:

Դե, աշխարհի բոլոր թռչունների ճագերի մեջ ամենատգեղը հենց ագռավի ճագն է:

Թռչունների թագավորը նայում է սև, տգեղ ճագին, չի կարողանում ծիծաղը զսպել և ասում է ագռավին.

- Ես քեզ ասել եմ՝ գնա՛, աշխարհի ամենասիրուն թռչունի ճագը բեր, դու քո էդ սև, գեշ, անճոռնի ճո՞ւտն ես բերել:

Ագռավն ասում է.

- Թագավո՛ր, ապրած կենա, շատ եմ ման եկել, բայց իմ ճագից սիրուն ճագ չեմ գտել:

Լուսատտիկն ու կապիկը

Ֆիլիպինյան կղզիներում համարյա մթնշաղ չի լինում: Արևոտ օրից անմիջապես հետո վրա է հասնում գիշերը:

Եվ այդ ժամանակ արմավենիների և պտերի միջև սկսում են շողշողալ լուսատտիկները:

Մի անգամ, գիշերը, մի լուսատտիկ պատրաստվում է այցելել իր ընկերոջը: Նա թռչում է արմավենու պուրակով՝ լուսավորելով ճանապարհն իր լապտերիկով:

Կապիկը, որ նստած է լինում բարձր ծառին, նկատում է լուսատտիկին: Նա նրան կանգնեցնում է և քմծիծաղով հարցնում.

- Ասա, խնդրեմ, ինչո՞ւ ես դու քո ճանապարհը լապտերիկով լուսավորում:

- Նա օգնում է ինձ հեռու մնալ մոծակներից,- հանգիստ պատասխանում է լուսատտիկը:

- Ահա թե ինչ,- բացականչում է կապիկը:- Ուրեմն դու նրանցից վախենո՞ւմ ես: Դու վախկոտ ե՞ս:

- Ոչ, ես վախկոտ չեմ: Եվ մոծակներից էլ չեմ վախենում,- ասում

է լուսատտիկը:- Բայց ես թռչում եմ իմ ճանապարհով և քիթս չեմ խոթում ուրիշի գործերի մեջ: Թող մոծակներն էլ զբաղվեն իրենց գործերով:

Կապիկը նորից է քմծիծաղում:

- Դե չէ՞: Դու, իհարկե, վախկոտ ես: Այո, այո, շատ վախկոտ, համառորեն պնդում է կապիկը: Դու շատ ես վախենում մոծակներից, թե չէ լապտերիկով չէիր թռչի:

Լուսատտիկը ոչինչ չի պատասխանում, ուժեղացնում է լապտերի լույսը և թռչում հեռու:

Բայց կապիկը դրանով չի հանգստանում: Առավոտյան նա վազում է իր ընկեր կապիկների մոտ և պատմում լուսատտիկի և իր հանդիպման մասին:

- Լուսատտիկը վախկոտի մեկն է,- ասում է նա:

- Վախկո՛ոտ, վախկո՛ոտ,- խմբով բացականչում են կապիկները և սկսում ծիծաղել փոքրիկ լուսատտիկի վրա:

Շուտով լուսատտիկին է հասնում կապիկի շատախոսության լուրը:

Եվ նա որոշում է մի լավ դաս տալ նրան:

Լուսատտիկը թռչում է նրա մոտ: Կապիկը քնած է լինում: Լուսատտիկը իր լապտերը մոտեցնում է ուղղակի նրա քթին, և նա անմիջապես արթնանում է:

- Դու ինչո՞ւ ես դատարկ-մատարկ դուրս տվել, թե ես վախկոտ եմ,– հարցնում է նա խստորեն:- Վաղը առավոտյան արի արմավենիների անտառի բացատը, և այնտեղ, բոլոր գազանների ու թռչունների աչքերի առջև, կտեսնենք՝ ես վախկո՞ոտ եմ, թե՞ վախկոտ չեմ:

- Հա՜, հա՜, հա՜,- բարձր քրքջում է կապիկը: - Չլինի՞ թե պատրաստվում ես ինձ հետ կռվել:

- Այո,- համարձակ պատասխանում է լուսատտիկը:

- Իսկ ո՞ւմ ես դու բերելու օգնական,- ծիծաղելով հարցնում է կապիկը: Չէ՞ որ դու չես դիմանա իմ ուժին:

- Ես մենակ կգամ,- համեստորեն պատասխանում է լուսատտիկը:

- Մենա՞կ,- զարմանում է կապիկը:

- Այո, մենակ,- կրկնում է լուսատտիկը:

Եվ կապիկը հասկանում է, որ ոչինչ չի կարող ստիպել հանդուգն լուսատտիկին հրաժարվելու կռվից, և որոշում է ինչպես հարկն է դաս տալ նրան:

- Լավ: Շատ լավ,- ասում է կապիկը:- Կկռվենք: Կգամ: Բայց իմացիր, որ մենակ չեմ գա: Ես ինձ հետ կբերեմ ուրիշ կապիկներ: Ամբողջ մի տասնյակ: Եվ հիշիր. նրանցից յուրաքանչյուրը նույնքան ուժեղ ու ճարպիկ է, ինչքան ես:

Այս որոշումով էլ նրանք բաժանվում են:

Կապիկը կանչում է իր ընկերներին, հանձնարարում ամեն մեկին մի-մի ամուր փայտ ձեռք բերել և հավաքվել արմավենիների բացատում:

Վրա է հասնում առավոտը: Արևը պայծառ լուսավորում է բացատը:

Լուսատտիկը հանգիստ սպասում է կռվի սկսվելուն:

Կապիկները գալիս են: Նրանք սկսում են մարտականորեն գոռալ, ոտներով դոփդոփել և թավալգլոր գալ՝ նախապես վայելելով փոքրիկ լուսատտիկի նկատմամբ տարվելիք հաղթանակը:

Տեսնելով նրան, կապիկը իր խումբը դասավորում է մի շարքով, իսկ ինքը կանգնում զորախմբի գլուխ: Նրա ազդանշանով կապիկները նետվում են լուսատտիկի վրա, բայց նա անսպասելիորեն թռչում է դեպի կապիկը և նստում նրա քթին:

Հենց այդ ժամանակ սրա կողքին կանգնած կապիկը թափով վրա է պրծնում և ամբողջ ուժով մեծ փայտով խփում է պստլիկ թշնամուն: Բայց լուսատտիկը արագ դուրս է պրծնում և փայտի ուժեղ հարվածը հասնում է կապիկի քթին: Սա ցավից մռնչում է և փռվում գետնին:

Իսկ լուսատտիկը հենց այդ ժամանակ թռչում է երկրորդ կապիկի քթին: Այստեղ երրորդ կապիկն է փայտը վրա բերում: Բայց լուսատտիկը նորից ճարպկորեն խույս է տալիս, հարվածը կպչում է երկրորդ կապիկի քթին, և նա էլ է ձգվում գետնին:

Իսկ լուսատտիկը շարունակում է մի կապիկի քթից մյուս կապիկի քթին թռչել:

Եվ ամեն մի կապիկ, նշան բռնելով լուսատտիկին, հարվածում է իր իսկ ընկերոջ քթին:

Շուտով բոլոր կապիկները փռվում են գետնին: Իսկ խելոք ու քաջ լուսատտիկը հաղթող է դուրս գալիս անհավասար պայքարից:

- Հիմա ո՞վ կհամարձակվի ասել, որ լուսատտիկը վախկոտի մեկն է և մոծակներից վախենում է,– գոռում է քաջը:

Նա մի քանի անգամ պտտվում է հաղթված կապիկների վրայով և թռչում է տուն:

Կապիկները շատ են ամաչում... Նրանք այլևս ոչինչ ասել չեն կարողանում...

Սուտլիկ որսկանը

Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով որսի գնացինք: Հադին էր, Հյուդին էր, Չատին էր, Մատին էր, հերս էր, ես էի. գնացինք որսի...

Սարեր, ձորեր դուզ գնացինք, որտեղ որս կար՝ սուսուփուս գնացինք, որտեղ ահ էր՝ կուզեկուզ գնացինք...

Գնացինք, գնացինք, շատ թե քիչ, մին էլ տեսնենք՝ երեք լիճ. երկուսը՝ ցամաք, մնի մեջ էլ իսկի ջուր չկա: Մին էլ, ըհը՛, մտիկ տանք, որ էս անջուր լճում լողում են, ճչում երեք հատ սպիտակ բադ, երկուսը սատկած են, մինն էլ կենդանի չի:

– Հադի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

Թե՝ թվանք չունեմ:

– Հյուդի՛, տո՛ւր հա, տուր:

– Ես էլ չունեմ:

Չատի... Մատի...

– Մենք էլ չունենք:

– Բա ի՞նչ անենք...

Հորս ձեռին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փետ կար. երեսն առավ, նշան դրեց, մին էլ տրա՛ք, որ կրակեց... Նա կրակեց, ես զարկեցի, որ զարկեցի՝ փռվեց էսպես, ամեն թևը հինգ գազ ու կես...

– Հադի, դանա՛կ...

Թե՝ դանակ չունեմ:

– Հյուդի, դու...

– Ես էլ չունեմ...

– Զատի՛, Մատի՛...

– Մենք էլ չունենք...

– Բա ի՞նչ անենք...

Հերս էլ ունի, բերան չունի:

Էս անբերան դանակը քաշեցին: Հադին մորթեց, չկարաց. Հյուդին մորթեց, չկարաց, Զատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ե՛ս քաշեցի մորթեցի:

Մորթեցի, վեր գցեցի, բադ մի ասիլ, մի գոմեշ ասա: Հադին շալակեց, չկարաց, Հյուդին շալակեց, չկարաց, Զատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ես շալակեցի: Շալակեցի, գնացինք:

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին էլ տեսանք երեք գեղ, երկուսի տեղն իսկի չի երևում, մնումն էլ իսկի շենլիկ չկա: Էս անշեն գեղում դես ման եկանք, դեն ման եկանք, մի տուն գտանք, մեջը՝ երեք պառավ, երկուսը՝ մեռած, մնի բերնումն էլ շունչ չկա:

– Տղերք,– ասինք,– եկեք բադով փլավ անենք:

Էս անշունչ պառավը գնաց դես ման եկավ, դեն ման եկավ, կես բրինձ գտավ, երեք պղինձ, երկուսը՝ ծակ, մինն էլ իսկի տակ չունի:

Ջուրը լցրինք էս անտակ պղինձը, մեջը ածինք բադն ու բրինձը,

անկրակ եփեցինք: Եփեց, եփեց, միսն ու բրինձը գնացին, մնաց ջուրը:

Որսից եկած սոված մարդիկ, վրա եկանք, կերա՜նք, կերա՜նք, ոչ աչքներս բան տեսավ, ոչ բերաններս բան մտավ:

Բովանդակություն

Էշի երգն ու ուղտի պարը 3
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Պարծենկոտ Գեմբեյը 7
(ճապոնական հեքիաթ, թարգմ.՝ Հ. Հարությունյան)
Պառավն ու աքլորը 14
(պարսկական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Գ. Ասատրյան)
Յոթ դևերի ախպերը 16
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Մ. Միքայելյանի)
Երեքն ու մեկը 23
(ինդոնեզական հեքիաթ)
Հեքիաթասացը 26
(ֆիլիպինյան հեքիաթ, թարգմ.՝ Հ. Հարությունյան)
Երկու հարևան 30
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Անզգամ կինը 32
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Հիմար փեսացուն 39
(վիետնամական հեքիաթ)
Կիկոսի մահը 43
(Հովի. Թումանյան)
Չորս խուլերը 49
(բիրմական հեքիաթ, թարգմ.՝ Հ. Հարությունյան)

Ծախած խրատը **51**
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Մ. Հ. Հակոբյանի)
Թագավորի նոր հագուստը **60**
(Հանս Քրիստիան Անդերսեն, թարգմ.՝ Հ. Մկրտչյան)
Մի աչքանին ու երկու աչքանին **68**
(ճապոնական հեքիաթ)
Անխելք մարդը **71**
(Հովհ. Թումանյան)
Սիսեռակեր հարսը **76**
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Ամենասիրուն ճագը **77**
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Լուսատտիկն ու կապիկը **78**
(ֆիլիպինյան հեքիաթ)
Սուտլիկ որսկանը **83**
(Հովհ. Թումանյան)

Կազմող՝
Նազելի Կարապետյան

Հրատարակչության խմբագիր՝
Գալյա Հովհաննիսյան

Նկարազարդումը՝
Լուիզա Գալստյանի

Համակարգչային ձևավորումը՝
Արաբո Սարգսյանի

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
EDIT PRINT
Publishing House